



ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԾՐԱԳՐԻ



ԵՐԵՎԱՆ
ՀՈՒՆՎԱՐ 2012



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ..... 5

1.1 ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐ 5

1.2 ԾՐԱԳՐԻ ՊԱՐԲԵՐԱՇՐՁԱՆ 7

1.3 ՀՁԾ ԾՐԱԳՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ 8

ԳԼՈՒԽ 2. ԾՐԱԳՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ..... 9

2.1 ԾՐԱԳՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ 9

2.1.1. ՀՁԾ-ի կառավարման խորհուրդը 11

2.1.2. ՋՏՊԿ-ի պայմանագրի կառավարման և դիտանցման միավոր (ՊԿԴՄ)..... 11

2.1.3. ՀՁԿԸ-ի Ծրագրի իրականացման մարմին (ԾԻՄ) 11

2.2 ԾԻՄ ԵՎ ՊԿԴՄ-Ի ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՀԱՄԱԼՐՈՒՄԸ..... 11

2.2.1. ՊԿԴՄ-ն անձնակազմի համայրումը..... 11

2.2.2. ԾԻՄ-ի անձնակազմի համայրումը..... 11

2.3 ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ..... 12

2.3.1 ՊԿԴՄ-ի անձնակազմ..... 12

2.3.2 ԾԻՄ-ի անձնակազմ..... 14

2.3 ԾԻՄ-Ի ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ..... 20

ԳԼՈՒԽ 3: ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ..... 21

3.1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 21

3.2 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԾՐԱԳՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ..... 21

3.3 ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ..... 24

3.4 ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ..... 34

3.4.1 Իրավական համակարգը..... 34

3.4.2 Ինստիտուցիոնալ համակարգը..... 37

3.5 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԱՍՑԵԱԳՐՈՒՄԸ..... 40

3.6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ և ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ 40



ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

3.7. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՒՄ ՆԵՐԱՌՎԵԼԻՔ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԴՐՈՒՅԹՆԵՐ 43

3.8. ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ 43

3.9. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ և ԴԻՏԱՆՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ 44

3.10 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄԱՍԻՆ ԶԵԿՈՒՅՑՆԵՐԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 56

ԳԼՈՒԽ 4. ԳՆՈՒՄՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ 57

4.1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ..... 57

4.2 ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ..... 58

4.3 ԳՆՈՒՄՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ..... 58

4.4. ԾԻՄ–Ի ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ 59

4.5. ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ..... 60

ԳԼՈՒԽ 5. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ..... 63

5.1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 63

5.2 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԸ..... 63

5.3 ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԸ..... 63

5.4 ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՈՒՄԸ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ ԵՎ ԱՌԻԴԻՏԸ 64

5.4.1 *Բյուջետավորումը*..... 64

5.4.2 *Ֆինանսական հաշվետվություններ ներկայացնելը*..... 65

5.4.3 *Հաշվապահական հաշվառումը և ֆինանսների ներքին հսկողությունը* 65

5.5 ԱՌԻԴԻՏԸ..... 66

5.6 ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ 67

5.6.1 Մասհանման հայտը..... 67

5.6.2 Վճարման պահանջագիրը 67

ԳԼՈՒԽ 6. ԴԻՏԱՆՑՈՒՄ, ԳՆԱՀԱՏՈՒՄ, ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ, ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ 69

6.1 ԴԻՏԱՆՑՈՒՄԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ 69

6.2 ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ..... 69

6.3 ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԴԻՏԱՆՑՈՒՄՆ ՈՒ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ..... 72



ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՀՀ դրամ	հայկական դրամ
ՀԶԿԸ	«Հայջրմուղկոյուղի» ընկերություն
ՊԴՄ	Պայմանագրերի դիտանցման միավոր
ՊԿԴՄ	Պայմանագրերի կառավարման և դիտանցման միավոր
ԶՎՀ	Զարգացման վարկային համաձայնագիր
ՎԼՀ	Վեճերը լուծող հանձնաժողով
ՇՄԱՓ	Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն
ԳՀ	Գնահատող հանձնաժողով
ՇՄԿՊՇ	Շրջակա միջավայրի կառավարման պլանի շրջանակ
ՇՄԿՄՊ	Շրջակա միջավայրի կառավարման և մոնիտորինգի պլան
ՖՀԿՄ	Ֆինանսահաշվապահական կառավարման միավոր
ՀՀ Կառավարություն	Հայաստանի Հանրապետության Կառավարություն
ՎԶՄԲ	Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ
ՄԶԱ	Միջազգային զարգացման ասոցիացիա
ՆԲՈՒ	Նախնական բնապահպանական ուսումնասիրություն
ՆՄ	Նամակ-հրավեր
ԿՊ/ՊԿ	Կառավարման պայմանագիր/Պայմանագրի կառավարիչ
ԿՏՀ	Կառավարման տեղեկատվական համակարգ
ԴԳ	Դիտանցում և գնահատում
ՖՆ	ՀՀ ֆինանսների նախարարություն
ԱՆ	ՀՀ առողջապահության նախարարություն
ԲՆ	ՀՀ բնապահպանության նախարարություն
ՀԶԶԾ	Համայնքային ջրամատակարարման և ջրահեռացման ծրագիր
ԶԱԽ	Զրի ազգային խորհուրդ
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՉՀԶ	Չհաշվառված ջուր
ԾԻՄ	Ծրագրի իրականացման մարմին
ԾԿԽ	Ծրագրի կառավարման խորհուրդ
ԳՊ	Գնումների պլան
ԱՀ	Առաջարկի հայտ
ՀԾԿՀ	Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով
ԿՀ	Կարգավորող հանձնաժողով
ԶՏՊԿ	ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե
ԲՊՏ	Բնապահպանական պետական տեսչություն
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՏԱ	Տեխնիկական առաջադրանք
ՏՎԸ	Տեխնիկական վերահսկման ընկերություն
ՀԲ	Համաշխարհային բանկ
ԶՌԿԳ	Զրային ռեսուրսների կառավարման գործակալություն
գործակալություն	



ԳԼՈՒԽ 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1.1 ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐ

Խորհրդային տնտեսության փլուզումից հետո երկար տարիներ Հայաստանի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի մեծ մասը բավական վատ վիճակում էր: Չնայած երկրում ջրի առատությանը, գրեթե ամբողջ բնակչությունը ջրից օգտվում էր օրական ընդամենը մի քանի ժամ: Անցած տասնամյակի ընթացքում ՀՀ Կառավարությունը պետական-մասնավոր գործընկերության մոդելի ավելի ինտենսիվ կիրառման միջոցով ջանքեր գործադրեց խմելու ջրի և ջրամատակարարման համակարգի մատչելիությունը, հուսալիությունը և որակը բարձրացնելու ուղղությամբ, ինչը փոխեց ոլորտի կառավարման ձևը և բարեփոխեց բաժանորդներին մատուցվող ծառայություններն ու դրանց որակը:

Հայաստանն ունի համեմատաբար առատ ջրային պաշարներ, եթե հաշվի առնենք, որ խմելու ջրի նպատակների համար պահանջվող ծավալները սահմանափակ են: Ընդհանուր ջրային պաշարների տարեկան միջին ծավալը կազմում է 10,2 մլրդ խմ, որից 2,4 մլրդ խմ օգտագործվում է խմելու նպատակով: Անկախություն ձեռք բերելուց հետո արդյունաբերական և գյուղատնտեսական գործունեության կտրուկ կրճատման պայմաններում ջրային պաշարները մեր օրերում վտանգված չեն: 120 ջրամատակարարման համակարգերից շուրջ 107-ը սնվում են գրունտային կամ աղբյուրների ջրերից, իսկ մնացած 13-ը՝ գետակներից:

Վերջին տասը տարիների ընթացքում Հայաստանի Հանրապետությունը լուրջ ձեռքբերումներ է գրանցել ջրային պաշարների կառավարման և պահպանության գծով օրենսդրական և ինստիտուցիոնալ ոլորտում, որոնք հիմնականում ուղղված էին երկրում ջրային պաշարների ինտեգրված կառավարման ներդրմանն ու կիրառմանը: Այս նպատակի իրագործմանն օժանդակել են մի շարք նախաձեռնություններ՝ միջազգային կառույցների, այդ թվում Համաշխարհային բանկի (ՀԲ) համագործակցությամբ:

Համաշխարհային բանկի վարկով ֆինանսավորվող Համայնքային ջրամատակարարման և ջրահեռացման ծրագիրը (ՀՋՁԾ) մեկնարկվեց 2004 թվականի հոկտեմբերի 19-ին՝ ՀՀ Կառավարության և ՀԲ-ի միջև ստորագրված Ջարգացման վարկի համաձայնագիրը կնքելուց հետո:

Ծրագրի շահառուն «Հայջրմուղկոյուղի» ընկերությունն է (ՀՋԿԸ), որը տրամադրում է ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ 37 քաղաքների և 271 գյուղերի: Դա ներառում է ավելի քան 277,000 անհատ և կորպորատիվ բաժանորդներ (ընդհանուր ավելի քան 620 հազար բնակչություն): Ծրագրի շահառուներն են «Հայջրմուղկոյուղի» ընկերության ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններից օգտվող համայնքներն ու իրավաբանական անձինք:

ՀՋՁԾ-ի հիմնական նախապայմանը և անկյունաքարը ՀՋԿԸ-ի կառավարման և Ծրագրի իրականացման համար ջրամատակարարման և ջրահեռացման ծառայության ոլորտի միջազգային օպերատորի ընտրությունն էր: Միջազգային մրցույթի արդյունքներով Կառավարման պայմանագրի կապալառու ընտրվեց ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների ոլորտի փորձառու



ՀԱՅՁՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

օպերատոր՝ ֆրանսիական «ՍԱՈՒՐ» ընկերությունը: 2004 թվականի օգոստոսի 19-ին «ՍԱՈՒՐ» ընկերության հետ կնքվեց Կառավարման պայմանագիր (ԿՊ) չորս տարի ժամկետով: ԿՊ-ի պաշտոնական մեկնարկի օրը 2004 թվականի հոկտեմբերի 19-ն էր:

ԿՊ-ի ընթացիկ կատարողականը դիտանցելու և ՀԶԶԾ-ի իրականացման ընթացքում ԿՊ-ի իրականացման հարցում աջակցություն տրամադրելու և ուղորդելու նպատակով ՀՀ կառավարությունը ՀԲ-ի ֆինանսավորմամբ ստեղծեց Պայմանագրի դիտանցման միավոր (ՊԴՄ): Ի սկզբանե ՀԶԶԾ-ն նախատեսված էր վեց տարի ժամկետով: Այնուամենայնիվ, հետագայում որոշվեց ծրագիրն իրականացնել երկու փուլով: 4 տարի+2 տարի. ընդ որում՝ 2-րդ փուլի իրականացումը պայմանավորված էր 1-ին փուլի բարեհաջող իրականացմամբ:

Համաշխարհային բանկի կողմից ՀԶԶԾ-ի իրականացման նպատակով տրամադրված վարկի ընդհանուր գումարը կազմում էր 15.4 միլիոն SDR (փոխարկման հատուկ իրավունք) (առանց համաֆինանսավորման): ՀԶԶԾ-ն ավարտվեց 2009 թվականի փետրվարի 28-ին՝ թեև ոլորտում դեռ զգալի ներդրումների անհրաժեշտություն կար:

ՀԶԶԾ-ի կատարողականը բավարար էր և համապատասխան իր զարգացման նպատակներին: Ծրագրով նախատեսված ներդրումային ծրագիրը մեծապես իրականացվում էր նպատակներին համապատասխան, իսկ ՀԶԿԸ-ի ջրամատակարարման համակարգերի համար վերանորոգման և վերականգնման ծրագրի շնորհիվ արդեն իսկ բարելավվել էր ջրի որակը և ծրագրով նախատեսված տարածքներում մաքուր և անվտանգ ջրամատակարարման մատչելիությունը: ՀԲ-ն ու ՀՀ կառավարությունը համաձայնություն ձեռք բերեցին իրականացնել ՀԶԶԾ-ի լրացուցիչ ֆինանսավորում, որը հնարավորություն կտար ՀԶԿԸ-ին շարունակել վերականգնման աշխատանքները և ընդլայնել ներդրումները՝ դրանով իսկ հնարավոր դարձնելով բարելավել ընդհանուր ջրամատակարարման համակարգի կայունությունը: ՀԶԶԾ-ին լրացուցիչ ֆինանսավորման ընդհանուր գումարը կազմում էր 12.8 միլիոն SDR (առանց համաֆինանսավորման): Ծրագիրն ավարտվում է 2011 թվականի դեկտեմբերի 31-ին:

ՀԶԶԾ-ի բարեհաջող իրականացումը հնարավորություն տվեց սկսել բանակցություններ ծրագրի իրականացման հաջորդ փուլի՝ Համայնքային ջրամատակարարման ծրագրի (ՀԶԾ) համար: Ծրագրի նպատակը կմնա նույնը, ինչպես և ՀԶԶԾ-ի համար, այն է՝ բարելավել ՀԶԿԸ-ի սպասարկման տարածքում բաժանորդներին տրամադրվող ծառայությունների որակը և ՀԶԿԸ-ի կայունությունը:

ՀԶԾ-ով կֆինանսավորվեն ջրամատակարարման համակարգերի նախագծման, իրականացման, վերականգնման ու վերակառուցման վերահսկողության աշխատանքները Մասիս, Էջմիածին, Աշտարակ և հարակից բնակավայրերում: Այդ տարածքներում **էներգախնայողության, կորուստների կրճատման, մատակարարման ժամերի և կայանի ծախսատարության գնահատման նպատակով կիրականացվեն նախնական իրագործելիության ուսումնասիրություններ և ներդրումների ազդեցությունը:** Թեև ծրագրի նախապատրաստական փուլում կամրոջականացվեն հատուկ ներդրումները, ընդհանուր առմամբ ֆինանսական միջոցները կուղղվեն՝ (i) գործառնական արդյունավետության և չհաշվատված ջրի ծավալների կրճատման հետ կապված ցանցերի փոխարինում և (ii) ջրաչափման և ջրաչափական հորերի բարելավման հետ կապված սարքավորում: Ավելին, ֆինանսական միջոցները կօգտագործվեն նյութերի, պահեստամասերի, սարքերի և սպառվող նյութերի (օրինակ՝ ջրամաքրման կայանների համար քլոր և քիմիական նյութեր) համար, ինչպես նաև



ՀԱՅՁՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

այլ շահագործման և տեխնիկական սպասարկման հետ կապված ծախսերը ֆինանսավորելու համար՝ նպատակ ունենալով բարելավել գործառնական կատարողականը և ծառայությունների որակը (մասնավորապես մանրէաբանական անվտանգություն):

1.2 ԾՐԱԳՐԻ ՊԱՐԲԵՐԱՇՐՋԱՆ

ՀՋԿ-ն ներառում է ենթածրագրի ընտրությունից մինչև ենթածրագրի ավարտը տեղի ունեցող գործընթացը: Ենթածրագրի պարբերաշրջանը համառոտ կերպով ներկայացվում է հետևյալ չորս հիմնական փուլերով: Դրա բաղադրիչները և ենթաբաղադրիչները ներկայացված են Աղյուսակ 1-1-ում:

- ա) Ծրագրի նախապատրաստում
- բ) Ծրագրի կառավարում
- գ) Ծրագրի իրականացում
- դ) Ծրագրի ավարտ

Աղյուսակ 1-1 Ծրագրի պարբերաշրջան, բաղադրիչներ և ենթաբաղադրիչներ

Փուլ	Բաղադրիչ	Ենթաբաղադրիչներ
Ծրագրի նախապատրաստում	Ծրագրի ընտրություն	<ul style="list-style-type: none"> ○ ՀՋԿ, ՋՏՊԿ- քաղաքային կարիքների նախանշում ○ Շահառու և համայնքային խորհրդատուներ ○ Ծրագրի շրջանակների նախանշում
	Ծրագրի գնահատում	ՀԲ-ի կողմից Ծրագրի առաջարկի գնահատում և հաստատում
	Ծրագրի իրականացման մասին հաշվետվություն	<ul style="list-style-type: none"> ○ Իրագործելիության ուսումնասիրություն ○ Կենսունակության վերլուծություն ○ Իրականացման կարգավորումներ ○ Գնումների ծրագիր ○ Ֆինանսական միջոցների աղբյուրներ
	Ծրագրի հաստատում	ՀԲ
Ծրագրի իրականացում	ՀՋԿ-ն իր Ծրագրի իրականացման գրասենյակի միջոցով	<ul style="list-style-type: none"> ○ Ենթածրագրերի տեխնիկական և տնտեսական գնահատում ○ Ենթածրագրերի մանրամասն նախագծման վերանայում և գնահատում ○ Ենթածրագրերի իրականացում ○ Ընթացիկ եռամսյակային հաշվետվության նախապատրաստում և ներկայացում ○ Տեխնիկական և ինստիտուցիոնալ աջակցություն (Ծրագրի կառավարում)



ՀԱՅՁՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

		<ul style="list-style-type: none"> ○ Ծրագրի իրականացման վերաբերյալ վերապատրաստում ○ Գնումների կառավարում ○ Պայմանագրի կառավարում ○ Ֆինանսների կառավարում ○ Տեղեկությունների կառավարման դիտանցում և արդյունքների գնահատում
Ծրագրի ավարտ	ՀԶԿԸ-ն իր Ծրագրի իրականացման գրասենյակի միջոցով	<ul style="list-style-type: none"> ○ Ծրագրի գործողությունների ավարտ ○ Ծրագրի իրականացման վերջնական հաշվետվության նախապատրաստում ○ Ավարտված աշխատանքների ընդունում ○ Պայմանագրերի ավարտ

1.3 ՀԶԾ ԾՐԱԳՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԶԵՌՆԱՐԿ

Այս ձեռնարկի նպատակն է սահմանել ՀԶԾ-ի նախագծման և իրականացման ընդհանուր ընթացակարգերը: Նախատեսվում է, որ այն կձառայի որպես Ծրագրի իրականացման մարմնի (ՕԻՄ) համար առաջնային ուղեցույց, որը կընդգրկի ծրագրի իրականացման բոլոր հայեցակետերը:

Ծրագրի պարբերաշրջանի յուրաքանչյուր բաղադրիչի և ենթաբաղադրիչի համար տարբեր գործառնական ընթացակարգերը հասցեագրելու նպատակով, այս ձեռնարկը կազմված է հետևյալ գլուխներից

- Գլուխ 1. Ներածություն
- Գլուխ 2. Ծրագրի կառավարում
- Գլուխ 3. Շրջակա միջավայրի և սոցիալական կառավարման պլան
- Գլուխ 4. Գնումների կառավարում
- Գլուխ 5. Ֆինանսական կառավարում
- Գլուխ 6. Մոնիտորինգ , գնահատում, հաշվետվության ներկայացում

Այս ձեռնարկով նախատեսված չէ ընդգրկել բոլոր հայեցակետերն ամբողջությամբ: Հնարավորության դեպքում տրամադրվել են կիրառվող քաղաքականություններին և հրահանգներին հղումները, ստուգաթերթերը, տիպային նամակներն ու նմուշները/ձևերը:

Այնուամենայնիվ, դրանցից մի քանիսը կարելի է գտնել Համաշխարհային բանկի կայքում՝ www.worldbank.org:



ԳԼՈՒԽ 2. ԾՐԱԳՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Այս գլխում համառոտ ներկայացված է ՀՁԾ-ի իրականացման նպատակով ստեղծված ծրագրի կառավարման պլանը և արձարծված են այս կառույցների խնդիրներն ու անձնակազմի համալրման պահանջները:

2.1 ԾՐԱԳՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ


ՀԲ-ի և ի դեմս ՀՀ ֆինանսների նախարարության ՀՀ Կառավարության միջև արդյունավետ հաղորդակցում և պարտականությունների բաշխումն ապահովելու նպատակով՝ անհրաժեշտ է ստեղծվել հետևյալ գործակալությունները

1. ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի (ՋՏՊԿ) կողմից պետք է ստեղծվի Պայմանագրի կառավարման և դիտանցման միավոր (ՊԿԴՄ), որը կաջակցի ՋՏՊԿ-ին Ծրագրի իրականացման համակարգման, ենթածրագրերի գնահատման և Ծրագրի վերջնական հաշվետվության պատրաստման հարցում: ՊԿԴՄ-ն պետք է սերտ համագործակցություն հաստատի ՀԲ-ի, ՀՋԿԸ-ի և այլ համապատասխան գերատեսչությունների հետ:
2. ՀՋԿԸ-ի կողմից պետք է ստեղծվի Ծրագրի իրականացման մարմին (ԾԻՄ), որը կգրադվի Ծրագրի ընթացիկ աշխատանքների համակարգմամբ, Ծրագրի իրականացմամբ և կառավարմամբ: ԾԻՄ-ը, ՊԿԴՄ-ի հետ համագործակցությամբ, պետք է աշխատանքի ընդունի Ծրագրի խորհրդատուների: ԾԻՄ-ը, ծրագրի խորհրդատուների աջակցությամբ, պետք է պատասխանատու լինի (ա) ՊԿԴԳ-ի հետ համագործակցությամբ Ենթածրագրի իրատեսական ուսումնասիրությունների հաստատման, (բ) մանրամասն ինժեներական նախագծերի և մրցույթի փաստաթղթերի պատշաճ պատրաստման և (գ) բոլոր Ենթածրագրերով նախատեսված շինարարական աշխատանքների վերահսկողության կազմակերպման համար:

Ծրագրի կառավարման կազմակերպական կառուցվածքը ներկայացված է **Նկար 1-ում**:



ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՀԲ ֆինանսավորմամբ իրականացվող համայնքային ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրի կառուցվածք





2.1.1. ՀԶԾ-ի կառավարման խորհուրդը

ՀԶԿԸ-ի նախագահի գլխավորությամբ Ծրագրի կառավարման խորհուրդը (ԾԿԽ), ՀՀ ֆինանսների, բնապահպանության նախարարությունների, հասարակական կազմակերպությունների (ՀԿ)-ի ներկայացուցիչները, ՀԶԿԸ-ի ավագ մասնագետները, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում այլ նախարարությունները կուղղորդեն և կվերահսկեն Ծրագրով նախատեսված աշխատանքները: Անհրաժեշտության դեպքում Համաշխարհային բանկի ներկայացուցիչները կարող են հրավիրվել մասնակցելու հանդիպումներին:

2.1.2. ՋՏՊԿ-ի պայմանագրի կառավարման և դիտանցման միավոր (ՊԿԴՄ)

ՊԿ-ի ընթացիկ կատարողականը դիտանցելու և ՀԶԾ-ի իրականացման հարցում Պայմանագրի կառավարման կապալառուին աջակցություն տրամադրելու նպատակով ՀԶԿԸ-ի կողմից կստեղծվի ՊԿԴՄ:

2.1.3. ՀԶԿԸ-ի Ծրագրի իրականացման մարմին (ԾԻՄ)

ՀԶԿԸ-ի կողմից պետք է ստեղծվի ԾԻՄ, որը կկառավարի և կդիտանցի ընթացիկ աշխատանքային ծրագրերը և ժամանակացույցերը ծրագրի տարբեր բաղադրիչներում և ենթաբաղադրիչներում:

2.2 ԾԻՄ ԵՎ ՊԿԴՄ-Ի ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՀԱՄԱԼՐՈՒՄԸ

ԾԻՄ-ի և ՊԿԴՄ-ի արդյունավետ գործունեությունն ապահովելու նպատակով ՋՏՊԿ-ի և ՀԶԿԸ-ի կողմից պետք է նշանակվի համապատասխան տեխնիկական անձնակազմ: Ծրագրի իրականացման ընթացքում ուշագրավ տարբեր հայեցակետերի կապակցությամբ, ԾԻՄ-ի և ՊԿԴՄ-ի համար անհրաժեշտ անձնակազմի համալրման մոդելը պետք է նշվի հետևյալ բաժիններում:

2.2.1. ՊԿԴՄ-ն անձնակազմի համալրումը

- ՊԿԴՄ-ի կազմը՝
 - Ծրագրի համակարգող, ՊԿԴՄ,
 - Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի (ՋՋՈ) ինժեներ,
 - Դիտանցման և գնահատման հարցերով մասնագետ:

2.2.2. ԾԻՄ-ի անձնակազմի համալրումը

ԾԻՄ-ի կազմը՝



- Ծրագրի ղեկավար,
- Ծրագրի ղեկավարի տեղակալ, ՋՋՈ ինժեներ,
- ՋՋՈ ինժեներ, նախագծման մասնագետ,
- ՋՋՈ ինժեներ, շինարարական աշխատանքների վերահսկողության մասնագետ,
- ՋՋՈ ինժեներ, շինարարական աշխատանքների վերահսկողության մասնագետ,
- Գնումների մասնագետ,
- Գնումների մասնագետի օգնական,
- Ֆինանսների/վճարումների գծով պատասխանատու,
- Ֆինանսների/վճարումների գծով մասնագետ,
- Հաշվապահ,
- Շրջակա միջավայրի վրա ազդեցության և սոցիալական հետևանքների գնահատման հարցերով մասնագետ,
- Շրջակա միջավայրի վրա ազդեցության և սոցիալական հետևանքների գնահատման հարցերով մասնագետի օգնական,
- Գործերի կառավարիչ,
- Տեխնիկական թարգմանիչ,
- Վարորդ:

2.2.1 և 2.2.2 կետերում նշված անձնակազմի առանցքային անդամներին վճարումներն ամբողջությամբ կամ մասամբ կիրականացվեն ՀԲ-ի կողմից տրամադրված միջոցներից: ՀԲ-ը նախապես կվերանայի ՏԱ-ն և թեկնածուների նախնական ցուցակը:

2.3 ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

2.3.1 ՊԿԴՄ-ի անձնակազմ

1. Ծրագրի համակարգող, ՊԿԴՄ

Հաշվետու է՝ ՋՏՊԿ-ի նախագահին:

Գործառույթներ՝ Ծրագրի ղեկավարը կհամակարգի և կվերահսկի ՊԿԴՄ-ի մասնագիտական անձնակազմի համապատասխան ընթացիկ աշխատանքները, մասնավորապես՝

- կիրականացնի Ծրագրի ընդհանուր համակարգումն ու դիտանցումը, կապահովի թիմի յուրաքանչյուր անդամի աշխատանքների ճշգրտությունը, որակը, ամբողջականությունն ու ճշտապահությունը,
- կպատրաստի օրակարգերը, հաշվետվությունները և տեղեկությունները ԾԿԽ-ի քննարկմանը ներկայացնելու համար,
- կկազմի Ծրագրի վերստուգող կոմիտեի (PSC) արձանագրությունները և կբաշխի դրանք բոլոր անդամներին և ԱԶԲ-ին,



- կմասնակցի ենթածրագրերի գնահատմանը և կապահովի, որ մյուս տեխնիկական անձնակազմը ներգրավված լինի ծրագրի իրագործելիության հաշվետվությունների պատրաստման աշխատանքներում/տեսչական այցերում ԾԻՄ–ի անձնակազմի հետ միասին,
- կապահովի եռամսյակային ընթացիկ հաշվետվությունների ժամանակին պատրաստումը,
- ԾԻՄ–ի հետ միասին կպատրաստի Ծրագրի վերջնական հաշվետվությունը,
- կապահովի ՋՏԿՊ–ի պաշտոնյաների հետ կապը, կպատրաստի բոլոր անհրաժեշտ օժանդակ նյութերը և կտրամադրի նրանց թարմացված տեղեկություններ առաջընթացի վերաբերյալ և, անհրաժեշտության դեպքում, կկազմակերպի անհրաժեշտ շնորհանդեսներ,
- կաջակցի ՄՖՀ–ների ստուգման առաքելություններին, ինչպես նաև ՀՀ կառավարության պաշտոնյաների և այլ համապատասխան գերատեսչությունների և դոնոր գործակալությունների հետ հանդիպումներում:

2. Դիտանցման և գնահատման հարցերով մասնագետ

Հաշվետու է՝ Ծրագրի համակարգողին, ՋՏԿՊ–ի նախագահին
Գործառույթներ՝ Դիտանցման և գնահատման մասնագետը պատասխանատու կլինի հետևյալի համար՝

- Պայմանագրի ղեկավարի կատարողականի ցուցանիշների դիտանցում և գնահատում,
- Ծրագրի ֆիզիկական, տնտեսական, սոցիալական և բնապահպանական հետևանքների դիտանցում,
- Ծրագրի կատարողականի ցուցանիշների և Ծրագրի կատարողականի կառավարման համակարգի (ԾԿԿՀ) մշակում և դիտանցում,
- Աշխատանքային պլանի և արդյունքների շրջանակի հիման վրա առաջընթացի և արդյունքների գնահատում:

3. Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի ինժեներ

Հաշվետու է՝ Ծրագրի համակարգողին, ՋՏԿՊ–ի նախագահին
Գործառույթներ՝ Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի ինժեները պատասխանատու կլինի հետևյալ աշխատանքների համար՝

- ԾԻՄ–ի խորհրդատուների հետ միասին կմասնակցի տեսչական այցերում և իրագործելիության աշխատանքներում,
- կորոշի ենթածրագրերի շարունակականությունը և դրանց համապատասխանությունը ենթածրագրի համաձայնեցված ընտրության չափանիշներին,
- կաջակցի ծրագրի համակարգողին բոլոր այլ հաշվետվությունները մշակելու և ԾԿԽ–ի, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում պետական մարմինների համար շնորհանդեսներ կազմակերպելու հարցում:



2.3.2 ԾԻՄ-ի անձնակազմ

1. Ծրագրի ղեկավար

Հաշվետու է՝ Ներդրումային ծրագրերի համակարգման վարչության տնօրենին, ՀԶԿԸ-ի տնօրենին Գործառնությունը Ծրագրի ղեկավարը կհամակարգի և կվերահսկի ԾԻՄ-ի և Ծրագրի «Խորհրդատուի»/«Նախագծման և վերահսկողություն իրականացնող ընկերության» մասնագիտական անձնակազմի համապատասխան աշխատանքները և պատասխանատու կլինի ծրագրի ընթացիկ աշխատանքների համար, մասնավորապես՝

- կապահովի Ծրագրի պլանավորումը, աշխատանքների փաթեթի պատրաստումը, բյուջեի կազմումը և արդյունքների վրա հիմնված կառավարումը,
- Կմշակի Ծրագրի իրականացման ռազմավարությունները, ժամանակացույցները և աշխատանքային պլանները,
- կմասնակցի Ծրագրի կատարողականի ցուցանիշների սահմանման հարցում և կիրականացնի դիտանցումը,
- կվերահսկի, կհամակարգի և կդիտանցի Ծրագրի «Խորհրդատուի»/«Նախագծման և վերահսկողություն իրականացնող ընկերության» աշխատանքները՝ ապահովելու համար առանձին մասնագետների ծառայությունների արդյունավետ և ժամանակին տրամադրումը, ներառյալ՝ Իրագործելիության ուսումնասիրությունների պատրաստումը, նախնական նախագծումը, մանրամասն նախագծումը և շինարարական աշխատանքների հսկողությունը,
- կմասնակցի Ենթածրագրերի գնահատմանը ՀԶԿԸ-ի բարձրաստիճան ղեկավարության հետ միասին,
- կմասնակցի Ենթածրագրերի իրագործելիության ուսումնասիրությունների պատրաստման գործընթացում,
- կհամակարգի մանրամասն ինժեներական նախագծի և մրցույթի փաստաթղթերի պատրաստումը,
- կապահովի ՄՖՀ-ների ուղեցույցների հետ գնումների ընթացակարգի համապատասխանությունը,
- կապահովի հաշվետվությունների ներկայացման կազմակերպումը ՄՖՀ-երի և ՀՀ պահանջների համաձայն (համապատասխան ընթացիկ հաշվետվությունների, ծախսումների և այլ փոփոխականների տրամադրումը ՄՖՀ-ին, Կառավարման խորհրդին և այլ ներգրավված գերատեսչություններին),
- կհամակարգի և կաջակցի ԾԻՄ/ՊԿԴՄ անձնակազմի, կապալառուների և խորհրդատուների հետ ծրագրով նախատեսված կանոնավոր հանդիպումներին,
- կկազմակերպի շինարարական աշխատանքների հսկողության նպատակով այցերը Ենթածրագրերի իրականացման ընթացքում,
- կմասնակցի Ծրագրի միջնաժամկետ ստուգմանը և կտրամադրի աջակցություն ՄՖՀ-երի ստուգման առաքելությունների ընթացքում,
- կհամակարգի և ակտիվ կկառավարի ու կմասնակցի գործընկերների համար ՀԶԿԸ-ի շրջանակներում Ծրագրով նախատեսված վերապատրաստման աշխատանքներին:

2. Գնումների մասնագետ



Հաշվետու է՝ Ծրագրի ղեկավարին, Ներդրումային ծրագրերի համակարգման վարչության տնօրենին Գործառույթներ՝ Գնումների մասնագետը պատասխանատու կլինի ՄՖՀ-երի կողմից ֆինանսավորվող Ծրագրի ամբողջ գնման գործընթացի պատրաստման և իրականացման, ինչպես նաև յուրաքանչյուր ենթածրագրերի մանրամասն գնումների ծրագրի համար: Գնումների մասնագետը՝

- կպատրաստի գնումների ծրագրերը,
- կպատրաստի գովազդի տեքստերը և կհետևի հրապարակման հետ կապված բոլոր աշխատանքներին,
- կպատրաստի մրցույթի փաստաթղթերը ՀՋԿԸ-ի համապատասխան վարչությունների կողմից սահմանված գծազրեթի և տեխնիկական բնութագրերի հետ միասին,
- կկազմակերպի և կմասնակցի կապալառուների հետ հայտերի հետ կապված խնդիրները հստակեցնելու նպատակով կազմակերպված ժողովներին,
- կմասնակցի և իրականացնի հայտերի բացումը,
- կմասնակցի հայտերի/առաջարկների գնահատմանը և գնահատման հաշվետվությունների պատրաստմանը,
- կկազմակերպի և կիրականացնի բանակցությունները,
- կպատրաստի գնումների հետ կապված արձանագրությունները, պայմանագրերի նախագծերը,
- կվարի յուրաքանչյուր ենթածրագրի հետ կապված գնումների բոլոր փաստաթղթերի հետ կապված փաստաթղթային համակարգը,
- կվերանայի և ՀՋԿԸ-ին կառաջարկի տարբերակներ պայմանագրերի իրականացման ընթացքում առաջացող գնումների հետ կապված բոլոր խնդիրները լուծելու հարցում:

2.1 Գնումների մասնագետի օգնական

Հաշվետու է՝ Գնումների մասնագետին, ծրագրի ղեկավարին, Ներդրումների ծրագրերի համակարգման վարչության տնօրենին

Գործառույթներ՝ Գնումների մասնագետի օգնականը պատասխանատու է ՄՖՀ-ներով ֆինանսավորվող ծրագրով նախատեսված գնումների հետ կապված խնդիրների պատրաստման և իրականացման հարցում աջակցություն տրամադրելու համար: Գնումների գծով օգնականը պետք է՝

- աջակցի գնումների ծրագրերի պատրաստման հարցում,
- աջակցի գովազդի տեքստերի պատրաստման հարցում,
- աջակցի կապալառուների հետ հայտերի հետ կապված խնդիրները հստակեցնելու նպատակով կազմակերպված ժողովներ կազմակերպելու հարցում,
- աջակցի Գնահատման հաշվետվությունների և համապատասխան գնահատման արձանագրությունների պատրաստման հարցում,
- պատրաստի բոլոր համապատասխան փաստաթղթերը Կառավարման խորհրդի հաստատմանը ներկայացնելու համար,
- աջակցի գնումների հետ կապված արձանագրությունների պատրաստման հարցում,



- վարի յուրաքանչյուր ենթածրագրի հետ կապված գնումների բոլոր փաստաթղթերի հետ կապված փաստաթղթային համակարգը:
- Իրականացնի գնումների մասնագետի կողմից սահմանված այլ գործառույթներ:

3. Ծրագրի ղեկավարի տեղակալ, Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի գծով

Հաշվետու է Ծրագրի ղեկավարին, Ներդրումների ծրագրերի համակարգման վարչության տնօրենին **Գործառույթներ՝** Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի գծով Ծրագրի ղեկավարի տեղակալը պատասխանատու է հետևյալի աշխատանքների համար.

- Բնակավայրերում, ներառյալ Ընկերության ծառայությունների ոլորտում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի նախնական ուսումնասիրության իրականացում,
- նախնական նախագծով, հիդրավլիկ հաշվարկներով, իրագործելիության ուսումնասիրության եզրակացություններով առաջարկվող տեխնոլոգիական լուծումների և ՄՖՀ-երի կողմից ընտրված չափանիշների վրա հիմնված ենթածրագրերի շրջանակում աշխատանքային նախագծերի համապատասխանության ստուգում,
- բոլոր շահագրգիռ կողմերի հետ հանդիպումների կազմակերպում, որոնց ընթացքում կքննարկվեն և կհստակեցվեն նախնական և աշխատանքային նախագծերով առաջարկված լուծումները, հանդիպումների հիմնավոր արձանագրությունների կազմում և դրանց ներկայացումը ղեկավարությանը,
- աշխատանքային նախագծերի ընդունում և աշխատանքների ծավալի, ծախսերի նախահաշվարկի, հետագա գնումների համար մրցույթի փաստաթղթերի համաձայնեցված համապատասխանության ստուգում,
- Շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողությանը մասնակցություն, շինհրապարակները պարբերաբար այցերի ապահովում, կապալառուների, խորհրդատուների և տեխնիկական հսկողների հետ հանդիպումների կազմակերպում՝ քննարկելու և գտնելու լուծումներ բացահայտված թերությունները վերացնելու համար և փոփոխության պատվերների և նոր գնային առաջարկների ստուգում,
- պահանջի դեպքում ի հայտ եկած նախագծային փոփոխությունների, հրատապ խնդիրների վերաբերյալ համապարփակ տեղեկությունների և բացատրությունների տրամադրում ՄՖՀ-երի ներկայացուցիչներին,
- ղեկավարության կողմից սահմանված այլ առաջադրանքների կատարում:

4. Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի ինժեներ (3 հաստիք)

Հաշվետու է՝ Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի գծով Ծրագրի ղեկավարի տեղակալին, Ներդրումային ծրագրերի համակարգման վարչության տնօրենին



Գործառույթներ՝ Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի գծով Ծրագրի ղեկավարի տեղակալը պատասխանատու է հետևյալ աշխատանքների համար.

- EPANET համակարգչային ծրագրով աշխատանքային նախագծերով ապահովված ջրամատակարարման բաշխման ցանցի հիդրավիկ հաշվարկների ստուգում,
- Բնակավայրերում, ներառյալ՝ Ընկերության ծառայության տարածքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի նախնական ուսումնասիրություն,
- Ընտրված ենթածրագրերի շրջանակում նախատեսված աշխատանքային նախագծերի, իրագործելիության ուսումնասիրության եզրակացությունների, աշխատանքների ծավալի, ծախսերի նախահաշվարկների և Տեխնիկական առաջադրանքով պահանջվող այլ հիմնավորումների համապատասխանության ստուգում,
- Նախնական և աշխատանքային նախագծերով առաջարկվող լուծումների քննարկման և հստակեցման նպատակով կազմակերպված հանդիպումներին մասնակցություն, հանդիպումների արձանագրության առաջին նախագծի կազմում,
- շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողությանը մասնակցություն, շինհրապարակներ պարբերաբար այցերի կազմակերպում՝ թերությունները և նախագծից շեղումները գրանցելու համար,
- ղեկավարության կողմից սահմանված այլ առաջադրանքների կատարում:

5. Ֆինանսների/վճարումների գծով պատասխանատու

Հաշվետու է՝ Ծրագրի ղեկավարին, Ներդրումների ծրագրերի համակարգման վարչության տնօրենին

Գործառույթներ՝ Ֆինանսական/վճարումների գծով պատասխանատուն պատասխանատու է հետևյալ աշխատանքների համար.

- ծրագրի վերաբերյալ տվյալների ու հաշիվների վարում՝ ընդհանուր ընդունված հաշվապահական հաշվառման սկզբունքների և գործելակերպի և ազգային օրենսդրության համաձայն, Ծրագրի համար ֆինանսական կառավարման համակարգի ստեղծում և գործարկում,
- ծրագրի բոլոր հաշիվների վարում ՄՖՀ-երի համապատասխան ուղեցույցների և կանոնակարգերի համաձայն,
- ծրագրի տարեկան բյուջեի մշակման գործընթացում մասնակցություն, ֆինանսական պլանավորման իրականացում գնումների մասնագետի հետ համագործակցությամբ, տարեկան բյուջեի կատարողականի ստուգում՝ ըստ ծրագրի բաղադրիչների, ծախսերի դասերի և ֆինանսավորման աղբյուրների,
- անհրաժեշտության դեպքում պետական մարմիններին և ՄՖՀ-ին բյուջեի կատարման մասին և այլ ֆինանսական զեկույցների ներկայացում,
- մասհանման հայտերի պատրաստում և ներկայացում՝ ՄՖՀ-ի և ՖՆ-ի (Գանձապետարանի) համապատասխան ընթացակարգերի համապատասխան,



- Ծրագրի Հատուկ հաշիվը ի բացում և տնօրինում: հատուկ պահանջագրերի կազմում, ակրեդիտիվների բացում, վճարման հանձնարարագրերի կազմում և Հատուկ հաշիվներից վճարումների կատարում,
- բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի (ՕՀ-ներ, ամփոփագրեր) պատրաստում ՄՖՀ-երին ներկայացնելու համար՝ Հատուկ հաշվի համալրում/վերականգնում պահանջելու նպատակով,
- Մատակարարողի հաշիվ ապրանքագրերի հաստատման համար անհրաժեշտ փաստաթղթերի հավաքման, ստուգման և պատրաստման ընթացակարգերի ապահովում, վճարման փաստաթղթերի և մատակարարողներին կատարվող վճարումների գրանցում, վճարումների համար հաշիվ ապրանքագրերի կազմում՝ ստուգելով ապրանքագրի համապատասխանությունը պայմանագրի պայմանների ու դրույթների հետ, բոլոր վճարումների ապահովումը ժամանակին և պայմանագրի պայմաններին ու դրույթներին, ինչպես նաև ՄՖՀ-երի համապատասխան ուղեցույցներին, կանոնակարգերին, իրավական պայմանագրերին և կիրառելի այլ փաստաթղթերին համապատասխան:
- ԾԻՄ-ի ֆինանսական միավորի աուդիտներին վերաբերող բոլոր աշխատանքների համակարգում,
- Աուդիտի ենթակա ծրագրի տարեկան ֆինանսական հաշվետվությունների կազմում և ծրագրի աուդիտի համակարգում, ինչպես նաև աուդիտորների հետ համագործակցություն, ծրագրի բոլոր հաշվետվությունների՝ ՄՖՀ-երի կանոնակարգերին համապատասխանության ապահովում,
- աուդիտի ենթարկված ծրագրի և մարմինների ֆինանսական հաշվետվությունները ՄՖՀ-ներին ժամանակին ներկայացման ապահովում,
- ծրագրի հաշվապահական հաշվառման համակարգի արժանահավատության ապահովում աուդիտի չենթարկված եռամսյակային ընթացիկ ֆինանսական հաշվետվությունների (ՄՖՖ-ներ) պատրաստման համար,
- հիմնական միջոցների գրանցամատյանի վարում՝ ծրագրի դրամական միջոցների հաշվին գնված սարքավորումների համար,
- հարկային, մաքսային և սոցիալական ապահովության մարմինների, ինչպես նաև Հայաստանում բյուջետային այլ հիմնարկների հետ համագործակցության ապահովում՝ ծրագրի իրականացման հետ կապված խնդիրների շուրջ, հարկային վճարումների գնահատում և դրանց ժամանակից վճարումը պետական բյուջե,
- անհրաժեշտության դեպքում ծրագրի հետ կապված վարչական պարտականությունների կատարում՝ ապահովելու համար, որ պայմանագրի հետ կապված նյութերը և գնումների մասով աշխատանքները լինեն ամբողջական և համապատասխան են յուրաքանչյուր պայմանագրի ֆինանսական կարգավիճակին, ֆինանսական հաշիվների և ֆինանսական փաստաթղթերի կազմմանը և արխիվացման իրականացում:
- ղեկավարության կողմից սահմանված այլ առաջադրանքների կատարում:

6. Շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցության մասնագետ

Հաշվետու է՝ Ծրագրի ղեկավարին, Ներդրումների ծրագրերի համակարգման վարչության տնօրենին



Գործառույթներ՝ Շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցության մասնագետը պատասխանատու է հետևյալ աշխատանքների համար՝

- Խորհրդատուի կողմից մշակված շրջակա միջավայրին առնչվող բոլոր փաստաթղթերի վերաբերյալ առաջարկների և դիտողությունների վերանայում և ներկայացում, մասնավորապես շրջակա միջավայրի նախնական ուսումնասիրությանը, յուրաքանչյուր ենթածրագրի համար շրջակա միջավայրի կառավարման և մոնիտորինգի պլանին և առկայության դեպքում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման /ՇՄԱԳ փաթեթների վերաբերյալ
- Խորհրդատուի կողմից մշակված ՇՄԿՄՊ-երի հաստատում և մրցույթի փաստաթղթերում շրջակա միջավայրին վերաբերող բոլոր փաստաթղթերի առկայության ապահովում,
- շրջակա միջավայրի վրա ազդեցության մեղմացմանն ուղղված միջոցների վերաբերյալ բացատրական քննարկումների կազմակերպում կապալառուների և ՏՎԸ-երի համար,
- Խորհրդատուների կողմից կազմակերպված գյուղական վայրերում հանրային քննարկումներում ակտիվ մասնակցության ապահովում,
- ՀՀ բնապահպանության նախարարությունից ժամանակին բոլոր բնապահպանական թույլտվությունների և փաստաթղթերի ձեռքբերում,
- Խորհրդատուի հետ համատեղ ՇՄԿՄՊ-ում ներառված շրջակա միջավայրի վրա ազդեցության մեղմացմանն ուղղված միջոցառումների իրականացման վերահսկում՝ ՀՀ օրենսդրության և ՄՖՀ-երի շրջակա միջավայրի և անվտանգության միջոցների մասին քաղաքականության փաստաթղթերով սահմանված պահանջների համաձայն,
- ՄՖՀ-երի քաղաքականության փաստաթղթերի հիման վրա ՀԶԿԸ-ի՝ շրջակա միջավայրի վերաբերյալ քաղաքականության մշակում, ինչպես նաև ՀԶԿԸ-ի անվտանգության և որակի ապահովման թիմի հետ անվտանգության քաղաքականության մշակման հարցում մասնակցություն,
- ՀԶԿԸ-ի և համապատասխան ՄՖՀ-երի պահանջների հիման վրա շրջակա միջավայրի մոնիտորինգի արդյունքների հիման վրա եռամսյակային և տարեկան հաշվետվությունների կազմում,
- ՀԶԿԸ-ի և ԾԻՄ-ի բնապահպանական ստուգումների հետ կապված աշխատանքների համակարգում,
- տնօրինության կողմից սահմանված այլ առաջադրանքների կատարում:

6.1 Շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցության մասնագետի օգնական

Հաշվետու է՝ Շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցության մասնագետին, Ծրագրի ղեկավարին, Ներդրումային ծրագրերի համակարգման վարչության տնօրենին
Գործառույթներ՝ Շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցության մասնագետի օգնականը պատասխանատու է հետևյալ աշխատանքների համար՝

- «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից իրականացվող ծրագրերի շրջանակում շրջակա միջավայրի և բնապահպանությանը վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի մշակման գործընթացում մասնակցություն,



ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

- Ներդրումային ծրագրի համակարգման վարչությանը ներկայացվող շրջակա միջավայրի կառավարման պլաների և շրջակա միջավայրին առնչվող այլ փաստաթղթերի վերանայման գործընթացում մասնակցություն,
- Տարբեր ծրագրերով և ընթացող շինարարական աշխատանքների ընթացքում պարբերաբար շինհրապարակներ այցելի կատարում,
- տնօրինության կողմից սահմանված այլ առաջադրանքների կատարում:

2.3 ԾԻՄ-Ի ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԾԻՄ-ի անձնակազմի վերապատրաստման աջակցելու նպատակով, որի ընթացքում անձնակազմը կձանոթանա այս ծրագրի համար անհրաժեշտ ընթացակարգերին և մեթոդներին, ԾԻՄ-ը կկազմակերպի կարիքների վրա հիմնված վերապատրաստման ծրագրերի յուրաքանչյուր մասնագիտական ոլորտի համար:



ԳԼՈՒԽ 3: ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԻ ՇՐՋԱՆԱԿԸ

3.1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Շրջակա միջավայրի կառավարման պլանի շրջանակը (ՇՄԿՊՇ) կազմվել է՝ Համայնքային ջրամատակարարման ծրագրի (ՀՋԾ) իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրության և ՀԲ՝ համապատասխան քաղաքականության նորմերի համապատասխանության ապահովման համար: ՇՄԿՊՇ-ի հիմնական նպատակն է առաջարկվող ներդրումների՝ բնապահպանական և սոցիալական հիմնական ազդեցությունը նախանշելու, ակնկալվող բացասական ազդեցությունը մեղմացնող միջոցառումներ սահմանելու, մեղմացնող միջոցառումների կիրառումը, մոնիտորինգի պլաններ մշակելու և իրականացման ու վերահսկողության ինստիտուցիոնալ պարտավորություններ սահմանելու համար ուղեցույցի ապահովումն է:

ՇՄԿՊՇ-ի իրականացման բյուջեն ներառվել է ծրագրի ծախսերում:

3.2 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԾՐԱԳՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ (ՀՋԿԸ) սպասարկման տարածքում ընդգրկված են 37 քաղաք և 300 գյուղական բնակավայր: ՀՋԿԸ-ի սպասարկման տարածքում ներառված չեն Երևանը՝ մայրաքաղաքը, Գյումրի, Վանաձոր, Արմավիր քաղաքները և մոտավորապես 600 գյուղեր:

ՀՋԾ-ի շրջանակներում ներդրում կկատարվի Հայաստանի Արմավիրի, Արարատի, Արագածոտնի և Կոտայքի մարզերի երեք քաղաքներում՝ Մասիսում, Աշտարակում, Էջմիածնում և հարակից գյուղերում: Այս քաղաքներում և հարակից գյուղական բնակավայրերում գործող ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների նկարագրությունը ներկայացված է 3.3 բաժնում:

Այս քաղաքներն ու գյուղերն ընտրվել են հետևյալ հիմնական առաջնային չափորոշիչներով.

- բնակավայրում բոլոր կամ զգալի թվով բաժանորդների օրական ջրամատակարարման կարճ տևողությունը և ծրագրի իրականացման միջոցով օրական ջրամատակարարման տևողությունը 18-ից 20 ժամ դարձնելու իրագործելիությունը,
- ջրամատակարարման համակարգին սպառնացող հետագա վատթարացման լուրջ վտանգը, ինչը հանգեցնում է բաժանորդներին տրամադրվող ջրամատակարարման ծառայությունների խափանմանը և մատակարարվող ջրի որակի վատթարացմանը (ընտրված ջրամատակարարման համակարգերի տարիքը՝ 40-50),
- չհաշվառված ջրի (ՉՀՋ) բարձր տոկոսը, որը ծրագրի միջոցով հնարավոր է կրճատել՝ 85-87%-ից հասցնելով 70-72%-ի,
- ծրագրի միջոցով էլեկտրաէներգիայի սպառումը կրճատելու անհրաժեշտության առկայությունը և իրագործելիությունը:

ՀՋԿԸ-ի հիմնական ռազմավարությամբ՝ չորս հիմնական չափորոշիչները բարելավելու համար կպահանջվի գլխավոր խողովակաշարերի, ցանցի խողովակների վնասված մասերի փոխարինումը և



ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ջրաչափերի ու դրանց հորերի տեղադրումը առանձնատների թաղամասերի՝ սեփական տարածքներում: ՀԶԿԸ-ն ընտրել է հետևյալ քաղաքները (գյուղերը), որոնք ներկայացված են ըստ առաջնայնության.

- 1 ՄԱՍԻՍ՝ քաղաք,
Այնթափ, Արբաթ, Հայանիստ, Ագատաշեն, Մարմարաշեն՝ հարակից գյուղեր. այսուհետ՝ «Մասիսի ենթածրագիր»:
- 2 Աշտարակ՝ քաղաք,
Կարբի, Մուղնի, Օհանավան, Սասունիկ, Կարին, Ագարակ՝ հարակից գյուղեր. այսուհետ՝ «Աշտարակի ենթածրագիր»:
- 3 Էջմիածին՝ քաղաք,
Այգեշատ, Դաշտ, Շահումյան, Նորակերտ՝ հարակից գյուղեր. այսուհետ՝ «Էջմիածնի ենթածրագիր»:

Աղյուսակ 3-1: Ծրագրի իրականացման ոլորտի ընդհանուր նկարագիրը

Բնակավայր	Բնակչություն	Բաժանորդներ	Օրական ջրամատակարարման տևողությունը (միջինը)	Ջրաչափ ունեցող բաժանորդների թիվը՝ արտահայտված տոկոսով (%)
ՄԱՍԻՍ	16 400	5 462	21,7	83
Այնթափ	5 600	1 882	19,4	77
Արբաթ	1 300	434	16,0	82
Հայանիստ	1 000	331	16,0	97
Ագատաշեն	600	173	16,0	75
Մարմարաշեն	2 000	650	15,8	78
Դարբնիկ	550	209	15	92
Դաշտավան	1200	404	15	77
ԱՇՏԱՐԱԿ	20 500	6 806	10,0	86
Կարբի	1 500	502	19,1	22
Մուղնի	1 100	341	24,0	81
Օհանավան	1 500	498	17,0	83
Սասունիկ	1 800	582	6,0	84
Կարին	500	142	4,0	80



ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Ագարակ	250	81	18,0	81
ԷԶՄԻԱԾԻՆ	44 000	14 692	18,9	92
Այգեշատ	1 000	328	24,0	63
Դաշտ	1 000	311	24,0	60
Շահումյան	1 300	434	24,0	70
Նորակերտ	2 400	776	12,6	58

Մասիս քաղաքը և հարակից գյուղերն այնպիսի բնակավայրեր են, որտեղ ջրամատակարարումը 100%-ով իրականացվում է մեխանիկական եղանակով. էլեկտրաէներգիայի տարեկան սպառումը 3.7 մլն կՎտ/ժ է, ծախսը՝ 88.0 մլն դրամ, իսկ կորստի (չհաշվառված ջուր) մակարդակը՝ 84%: Թեև Մասիսում օրական ջրամատակարարման տևողությունը 21.7 ժամ է, ՀԶԿԸ-ի սպասարկման տարածքում դեռևս կա Մասիսի մեկ թաղամաս, որտեղ ապրում է բնակչության մոտավորապես 20%-ը («Մասիս կայարան» թաղամասը), սակայն ջրամատակարարման տևողությունն ընդամենը 6 ժամ է:

Այնթափ գյուղի բարդ լանդշաֆտի պատճառով ՀԶԿԸ-ն ի վիճակի չի եղել իր կողմից արտադրված ջուրը մատակարարելու բաժանորդների 20%-ին: Ընկերությունը ջուր է գնում «Երևան ջուր» ՓԲԸ-ից. տարեկան ծախսը՝ 8.5 մլն դրամ:

Ծրագրում ներառված մյուս գյուղերում կորուստների մակարդակը՝ 85-87%, նույնպես ընդունելի չէ:

Աշտարակում օրական ջրամատակարարման տևողությունը հնարավոր չի լինի ավելացնել ջրի սակավության պատճառով, որովհետև գլխավոր խողովակաշարի վերին մասում գտնվող գյուղերը զգալի ծավալով խմելու ջուր են սպառում: Կորուստների մակարդակը կրկին մոտավորապես 85% է: Այդ պատճառով առաջարկված ծրագրում Աշտարակը ջրով ապահովելու որպես հիմնական ուղղություն նշվել է ՀԶԾ-ի իրականացումը, ինչը հնարավորություն կտա Աշտարակ քաղաքի գլխավոր խողովակաշարի վերին հատվածում գտնվող գյուղերում ջուր խնայելու և ավելացած ջուրն օգտագործելու Աշտարակում օրական ջրամատակարարման տևողության ավելացման և ջրամատակարարման որակի բարելավման համար: Դրան զուգահեռ՝ կկրճատվի չհաշվառված ջրի տոկոսը:

Էջմիածին քաղաքը միննույն խնդիրն ունի վերին հատվածում գտնվող գյուղերի հետ: Այս գյուղերում ջրամատակարարման տևողությունը 24 ժամ է, բայց միննույն ժամանակ ընկերությունն գրանցել է չհաշվառված ջրի բարձր մակարդակ: Էջմիածնում անհրաժեշտ է լուծել բնակելի շենքերի նկուղներում գտնվող 75 մղիչ պոմպերի խնդիրը: Այդ պոմպերի էլեկտրաէներգիայի ծախսը տարեկան 18.0 մլն դրամ է: Բաշխիչ ցանցի բարելավման և համապատասխան գոտիավորման շնորհիվ՝ ընկերությունը կկարողանա ծառայություններ մատուցել առանց մղիչ պոմպերի և ավելի կայուն ջրամատակարարում ապահովել բարձր հարկերի բաժանորդների համար:



3.3 ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա. ՄԱՍԻՍԻ ԵՆԹԱԾՐԱԳԻՐԸ

Գործող համակարգի նկարագրությունը

Մասիս քաղաքի, Այնթափ, Արբաթ, Հայանիստ և Ազատաշեն գյուղերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի շահագործումը և սպասարկումն իրականացնում է ՀՋԿԸ-ի «Կենտրոն-Արևմտյան» տարածքային մասնաճյուղի «Մասիս» տեղամասը:

Բաժանորդների թիվը. Մասիս քաղաքում՝ 5441, Այնթափ գյուղում՝ 1841, Արբաթ գյուղում՝ 433, Հայանիստ գյուղում՝ 325, Ազատաշեն գյուղում՝ 167:

Ջրաչափ ունեցող բաժանորդների թիվը. Մասիս քաղաքում՝ 4204, Այնթափ գյուղում՝ 1413, Արբաթ գյուղում՝ 357, Հայանիստ գյուղում՝ 315, Ազատաշեն գյուղում՝ 315:

Մասիս քաղաքին և Այնթափ գյուղին «Արարատյան» պոմպակայանից ջուրը մատակարարվում է 2 N=315 կՎտ հզորություն ունեցող կենտրոնախույս պոմպերով, որոնցից մեկը գործում է 24 ժամյա ռեժիմով, իսկ մյուսը պահուստային է: Պոմպերը տեղադրվել են 2004-2008 թվականներին Համաշխարհային բանկի վարկային ծրագրի շրջանակներում՝ փոխարինելով N=630 կՎտ պոմպերին: Ջուրը Խարբերդի 2x2000 մ³ տարողությամբ N1 ՕԿՋ-ին մատակարարվում է 500 մմ տրամագծով, 8.8 կմ երկարությամբ պողպատե խողովակներով, որտեղից այն հասցվում է Մասիս քաղաք 500 մմ տրամագծով, 4.7 կմ երկարությամբ պողպատե մայր ջրատարով և Այնթափ համայնքին՝ 200 մմ տրամագծով, մոտավորապես 2.5 կմ երկարությամբ թուջե խողովակներով: Ջուրը Նոր Կյուրին, Մարմարաշեն, Արևաբույր և Ջրահովիտ գյուղերին մատակարարվում է միևնույն ջրամբարից: Այնթափ գյուղի բարձրադիր հատվածը սնուցվում է 500 մմ տրամագծով մայր ջրատարից, որը բաշխիչ ցանցին միացվում է 160 մմ տրամագծով նորակառույց պոլիէթիլենային մայր ջրատարի միջոցով: Մասիս քաղաքի «Մասիս կայարան» թաղամասը նույնպես ուղղակիորեն միացված է 500 մմ տրամագծով պողպատե մայր ջրատարին:

ՀՋԿԸ-ն 54 կմ երկարությամբ բաշխիչ ցանց է շահագործում Մասիս քաղաքում և 20 կմ երկարությամբ բաշխիչ ցանց՝ Այնթափ գյուղում:

Միևնույն՝ «Արարատյան» պոմպակայանից Արբաթ, Հայանիստ և Ազատաշեն համայնքներին ջուր է մատակարարվում երկու պոմպերի (մեկը՝ պահուստային) միջոցով, որոնք նախատեսված են Մասիսի շրջանի մի քանի գյուղական համայնքների ջրամատակարարման համար: Այս համակարգի միջոցով ջուրը հասնում է Նորաբացի ՕԿՋ-ներ և 2010 թվականին շահագործման հանձնված պոմպակայան և



ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

մատակարարվում է գյուղական համայնքների, այդ թվում՝ Արբաթ, Հայանիստ և Ազատաշեն գյուղերի բաշխիչ ցանցերին:

Արբաթ համայնքին ջուրը մատակարարվում է 0.9 կմ երկարությամբ, 300 մմ տրամագծով պոլիէթիլենային մայր ջրատարով: Համայնքի ներքին ցանցի երկարությունը 7.75 կմ է: Հայանիստ համայնքին ջուրը մատակարարվում է 200 մմ տրամագծով, 1.8 կմ երկարությամբ պոլիէթիլենային մայր ջրատարով: Համայնքի ներքին ցանցի երկարությունը 6 կմ է:

Ազատաշեն համայնքին ջուրը մատակարարվում է 0.4 կմ երկարությամբ, 100 մմ տրամագծով պողպատե մայր ջրատարով: Համայնքի ներքին ցանցի երկարությունը 4.5 կմ է:

Իրականացված աշխատանքները

Վարկային, դրամաշնորհային, ինչպես նաև սեփական միջոցներով իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- Մասիս քաղաքում 11 կմ երկարությամբ բաշխիչ ցանցի և մայր ջրատարի վերականգնում,
- 12.7 կմ երկարությամբ բաշխիչ ցանցի վերականգնում,
- Արբաթ համայնքը սնուցող մայր ջրատարի և ներքին ցանցի վնասված՝ 5 կմ երկարությամբ հատվածի վերականգնում,
- Հայանիստ գյուղում 2.4 կմ երկարությամբ բաշխիչ ցանցի և մայր ջրատարի վերականգնում,
- Ազատաշեն համայնքում ջրային ցանցի վերականգնման որևէ աշխատանք դեռ չի կատարվել:

Բաշխիչ ցանցերի վերականգնումից բացի՝ կատարվել են նաև ներտնային միացումներ, մասնավորապես՝ ջրաչափերի հորերի տեղադրման և համայնքների գլխավոր մայր ջրատարների վերակառուցման աշխատանքներ: Ընդհանուր առմամբ՝ Մասիս քաղաքի և հարակից գյուղերի ջրամատակարարման համակարգերը բարելավվելու նպատակով նորոգվել է մոտավորապես 9.6 կմ երկարությամբ մայր ջրատար և կառուցվել է 2000 մ³ հզորությամբ ՕԿՁ: Պետք է շեշտել այն հանգամանքը, որ կատարված աշխատանքների արդյունքում ջրի որակը բարձրացել է, իսկ ջրամատակարարման տևողությունը դարձել է միջինը 17–18 ժամ: Այնուամենայնիվ, բաշխիչ ցանցերում կատարված աշխատանքները բավարար չեն:

Մասիս քաղաքում և շրջանի մյուս համայնքներում գրունտային ջրերի բարձր մակարդակը, գրունտի ազդեցիկությունը, մետաղական խողովակաշարերի էլեկտրական և քիմիական պաշտպանության բացակայությունը և խողովակների պատերի նստվածքն առաջացնում են մայր ջրատարների վաղաժամ քայքայում և թողունակության կրճատում: Վերոնշյալ բոլոր փաստերը հանգեցնում են բաշխիչ ցանցի կորուստների բարձր մակարդակի:



Մասիս քաղաքի զարգացումն ընթանում է այնպիսի նոր թաղամասերի պայմաններում, որտեղ բացակայում են բաշխիչ ցանցերը, իսկ գործող ցանցի մի մասն ապահովվում է պոլիէթիլենային վատորակ խողովակներով, որոնք հաճախակի վթարների պատճառ են դառնում:

Շրջակա միջավայրի ելակետային տվյալներ

Մասիս քաղաքում, Այնթափ, Արբաթ, Հայանիստ, Ազատաշեն, Մարմարաշեն, Դարբնիկ և Դաշտավան գյուղերում

- Բնակչության թիվը. Մասիսում՝ 21400, Այնթափ գյուղում՝ 7712, Արբաթ գյուղում՝ 1801, Հայանիստ գյուղում՝ 2046, Ազատաշեն գյուղում՝ 786, Մարմարաշենում՝ 2000, Դարբնիկում՝ 550, Դաշտավանում՝ 1200,
- Ծովի մակարդակից միջին բարձրությունը. Մասիս քաղաքում՝ 828-854 մ, Այնթափ գյուղում՝ 845-880 մ, Արբաթ գյուղում՝ 838-865 մ, Հայանիստ գյուղում՝ 836-862 մ, Ազատաշեն գյուղում՝ 847-865 մ, Երևանից հեռավորությունը. Մասիս քաղաք՝ 14 կմ դեպի հարավ, Մարմարաշեն՝ 20 կմ, Դարբնիկ՝ 25 կմ, Դաշտավան՝ 18 կմ,
- Գյուղերի հեռավորությունը Մասիս քաղաքից. Այնթափ՝ 9 կմ, Արբաթ՝ 20 կմ, Հայանիստ՝ 8 կմ, Ազատաշեն՝ 14 կմ, Մարմարաշեն՝ 10 կմ, Դարբնիկ՝ 20 կմ, Դաշտավան՝ 20 կմ,
- Տեղումների տարեկան միջին քանակությունը՝ 252 մմ,
- Խոնավությունը՝ 59%
- Արարատի մարզի հատուկ պահպանվող տարածքներն են՝ «Խոսրովի անտառ» պետական արգելոցը, «Գոռավանի ավազուտներ» և «Խոր Վիրապ» պետական արգելավայրերը և բնության 11 հուշարձաններ: Մասիսի ենթածրագրի տարածքը հատուկ պահպանվող տարածքների հարևանությամբ չի գտնվում:
- Արարատի մարզում ստորերկրյա ջրային պաշարները գերակշռում են, իսկ մակերևութային ջրերը (4 գետ, 2 ջրամբար) (77 մլն մ³/տարի) հիմնականում օգտագործվում են ոռոգման նպատակներով: Գետերից երկուսը՝ Վեդին և Ազատը, սկիզբ են առնում մարզի տարածքում: Արաքս գետը հոսում է մարզի տարածքով: Հրազդան և Սևջուր գետերը թափվում են Արաքս գետ:
- Արարատի մարզի տարածքում կա Կարմիր գրքում (2010) գրանցված 136 բուսատեսակ, որոնցից 79-ը վտանգված են, 22-ը՝ խոցելի, իսկ 34-ը՝ ծայրահեղ վտանգված:

Ջրամատակարարման կառուցվածքները

«Ռանչպար» խորքային հորերը՝ ունեն օրական մոտ 42000 մ³ էլք: Աղբյուրի ջուրը կարող է օգտագործվել խմելու և կենցաղային նպատակներով և դրա համար միայն քլորացում է պահանջվում:

Խորքային հորերից ջուրը մատակարարվում է «Արարատյան» պոմպակայանի ջրընդունիչ կառուցվածքին, որտեղից այն մղվում է դեպի «Խարբերդ» ՕԿՋ, որն ունի օրական մոտ 12000 մ³ թողունակություն:



ՀԱՅՁՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

500 մմ տրամագծով գլխավոր մայր ջրատարի երկարությունը 13.5 կմ է, իսկ 200 մմ տրամագծով գլխավոր մայր ջրատարինը՝ 2.5 կմ:

Ջուրը մղվում է երկու ՕԿՁ-ներին, որոնց ընդհանուր թողունակությունը 4000 մ³ է: ՕԿՁ-ն գտնվում է 921 մ բարձրության վրա:

Վերոնշյալ ջրամբարներից ջուրը Մասիս քաղաքի բաշխիչ ցանցին մատակարարվում է հիմնականում 50-200 մմ տրամագծով, 45 կմ երկարությամբ պողպատե և պոլիէթիլենային խողովակներով, իսկ Այնթափ համայնքի բաշխիչ ցանցին՝ 50-160 մմ տրամագծով, 20 կմ երկարությամբ թուջե և պոլիէթիլենային խողովակներով, որոնք ընդգրկում են համայնքի 50-60%-ը: Համայնքի մյուս մասի ջրամատակարարումն իրականացվում է ճնշման խողովակաշարի միջոցով՝ առանց ջրամբարի:

Արբաթ, Հայանիստ և Ազատաշեն գյուղերին ջուրը մղիչ պոմպերի միջոցով մատակարարվում է Նորաբացի 2000 մ³ տարողությամբ ՕԿՁ-ից: «Արարատյան» պոմպակայանի ջրընդունիչ կառուցվածքներում ջրի վարակազերծումը կատարվում է հեղուկ քլորով: Ջրամատակարարման կառուցվածքների շահագործումը փոխկապակցված է շրջանի ջրամատակարարման համակարգերի հետ, որոնք սնուցվում են «Արարատյան» պոմպակայանից:

Կեղտաջրերի հավաքման (հեռացման) համակարգերը

Կեղտաջրերի հավաքման (հեռացման) համակարգերում ոչ մի ներդրում չի կատարվել:

Բնակչության 42.5%-ը միացված է ջրահեռացման համակարգին:

Մասիս քաղաքի կեղտաջրերի մաքրման կայանն ավելի քան 20 տարի է, ինչ չի գործում:

Կեղտաջրերը հեռացվում են 35.5 կմ երկարությամբ կոյուղագծով և ինքնահոսով արտանետվում են Հրազդան գետ՝ առանց մաքրման:

Ջրահեռացման համակարգ չունեցող թաղամասերում կեղտաջրերն արտանետվում են տեղի կլանող հորատանցքեր՝ առանց սանիտարական նորմերի պահպանման:

Այնթափ, Արբաթ, Հայանիստ և Ազատաշեն գյուղերը ջրահեռացման համակարգ չունեն. տնային տնտեսություններն օգտագործում են կլանող հորատանցքեր: Բացառություն են Այնթափ գյուղի երկու փողոցները, որոնք միացված են արտադրական ձեռնարկությունների համար նախկինում կառուցված կոյուղագծերին:



ՀԶԾ-ի շրջանակներում իրականացվող բարելավման աշխատանքները

- Բաշխիչ ցանցերի վերականգնում և գոտիավորում՝ հաշվի առնելով գրունտային ջրերի բարձր մակարդակը,
- տնային նոր միացումներ՝ հորերում ջրաչափերի տեղադրմամբ,
- կարգավորման միավորների հիմնանորոգում և նոր միավորների կառուցում:

Բ. ԷԶՄԻԱԾՆԻ ԵՆԹԱԾՐԱԳԻՐ

Գործող համակարգի նկարագրությունը

Էջմիածին քաղաքի, Այգեշատ, Դաշտ, Շահումյան և Նորակերտ գյուղերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի շահագործումն ու սպասարկումն իրականացնում է ՀԶԿ-ի «Կենտրոն-Արևմտյան» տարածքային մասնաճյուղի «Էջմիածին» տեղամասը:
 Բաժանորդների թիվը Էջմիածին քաղաքում 14692 է, Այգեշատ գյուղում՝ 328, Դաշտում՝ 311, Շահումյանում՝ 434, Նորակերտում՝ 776:

Ջրաչափ ունեցող բաժանորդների թիվն Էջմիածին քաղաքում 13530 է, Այգեշատ գյուղում՝ 208, Դաշտ գյուղում՝ 186, Շահումյանում՝ 305, Նորակերտում՝ 448:

Էջմիածին քաղաքին ջուրը «Բազմադրյուր» և «Ղազարավան» ստորերկրյա աղբյուրներից մատակարարվում է երեք հիմնական համակարգերով, որոնցից երկուսը սնուցվում են ստորերկրյա աղբյուրներից, իսկ մեկը՝ խորքային հորերից: Ջրը ներմուծվում է կառուցվածքի ընդհանուր թողունակությունը 750 լ/վրկ է, որից 500 լ/վրկ-ը մատակարարվում է Էջմիածին քաղաքի և 26 գյուղական համայնքների բաշխիչ ցանցին, իսկ մոտավորապես 250 լ/վրկ-ը սպառում են Արագածոտնի մարզի 13 գյուղական համայնքները: Հիմնական կառուցվածքներից ջուրը մատակարարվում է 300-600 մմ տրամագծով, 136 կմ ընդհանուր երկարությամբ երեք գլխավոր մայր ջրատարներով:

Մինչև Էջմիածին քաղաքը սնուցող ՕԿՁ-ներ հասնելը՝ գլխավոր մայր ջրատարներն անցնում են գյուղական համայնքների տարածքով, երբեմն՝ սեփականաշնորհված հողերով, որտեղ առկա են տնային տնտեսությունների կողմից կատարված բազմաթիվ անօրինական միացումներ, որոնք բացասական ազդեցություն ունեն Էջմիածին քաղաքի հարակից գյուղական համայնքների ջրամատակարարման և ջրի կորուստների ցուցանիշի վրա:

Քաղաքի բաշխիչ ցանցի ընդհանուր երկարությունը 105 կմ է: Բաշխիչ ցանցի որոշ հատվածներ 40 տարի է, ինչ շահագործվում են: Ցանցը բաղկացած է թուջե և պողպատե խողովակներից: Բնակելի



բազմաբնակարան շենքերի և առանձնատների ներբակային ցանցերը նույնպես տեխնիկապես վատ վիճակում են գտնվում:

Պահանջվող ճնշումը ցանցում չի պահպանվում ջրի կորուստների և ցանցի կոռոզիայի պատճառով, իսկ բաժանորդների ջրամատակարարման նպատակով օգտագործվում են 96 ներբակային և անհատական պոմպեր:

Իրականացված աշխատանքները

Վարկային, դրամաշնորհային, ինչպես նաև սեփական միջոցներով Էջմիածին քաղաքում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- Մոտավորապես 12 կմ երկարությամբ բաշխիչ ցանցի վերականգնում՝ ներառյալ ասբեստե խողովակներից կազմված հատվածների փոխարինում,
- Մոտավորապես 11.52 կմ երկարությամբ ջրագծերի կառուցում 980 ներտնային միացումների նպատակով:

Արդյունքում բարելավվել է ջրամատակարարման որակը, իսկ տևողությունը 4 ժամից դարձել է 19.6 ժամ: Այգեշատ, Դաշտ, Շահումյան և Նորակերտ գյուղերին ջուրը մատակարարվում է «Բազմադրյուր-Ղազարավան» համակարգից: Գյուղերի բաշխիչ ցանցերը հիմնականում կառուցվել են 1970-ականներին և տեխնիկապես վատ վիճակում են գտնվում: Հաշվի առնելով այն փաստը, որ գյուղերին ջուրն ուղիղ միացումներով մատակարարվում է 50-100 մմ տրամագծով գլխավոր մայր ջրատարով, ինչպես նաև բաշխիչ ցանցի՝ տեխնիկապես վատ վիճակը՝ ջրի կորուստները գյուղական համայնքներում հասնում են մեծ ծավալների: Վերոնշյալ գյուղերի ջրամատակարարման համակարգերում որևէ ներդրում չի կատարվել:

Շրջակա միջավայրի ելակետային տվյալներ

- Էջմիածին քաղաքը գտնվում է ՀՀ Արմավիրի մարզի արևմտյան մասում:
- Բնակչությունը՝ 56 388 մարդ,
- ծովի մակարդակից միջին բարձրությունը՝ 870 մ,
- Երևանից հեռավորությունը՝ 25 կմ,
- Արմավիրի մարզկենտրոնից հեռավորությունը՝ 20 կմ,
- տեղումների տարեկան միջին քանակությունը՝ 274 մմ,
- խոնավությունը՝ 62%,
- զարգացած է ճանապարհային ենթակառուցվածքը:



ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

- Արմավիրի մարզը գտնվում է Հայաստանի հարավ-արևմուտքում և զբաղեցնում է Արարատյան դաշտի արևմտյան մասը: Մարզի գլխավոր ջրային ավազանն Արաքս գետն է իր ձախակողմյան՝ Ախուրյան, Սելավ-Մաստարա, Սևջուր վտակներով:
- Արմավիրի մարզի հատուկ պահպանվող տարածքներից է «Որդան կարմիր» պետական արգելավայրը, դակայն Էջմիածնի ենթածրագրի տարածքը բավականին հեռու է այդ հատուկ պահպանվող տարածքից:

Այգեշատ, Դաշտ, Շահումյան և Նորակերտ գյուղերը գտնվում են ՀՀ Արմավիրի մարզի հյուսիս-արևելյան մասում:

- Բնակչությունն Այգեշատ գյուղում 1480 մարդ է, Դաշտ գյուղում՝ 752, Շահումյանում՝ 1120, Նորակերտում՝ 2564:
- Ծովի մակարդակից միջին բարձրությունն Այգեշատ գյուղում 870 մ է, Դաշտ գյուղում՝ 945 մ, Շահումյանում՝ 940 մ, Նորակերտում՝ 940 մ:
- Մարզկենտրոնից հեռավորությունը. Այգեշատ՝ 34 կմ, Դաշտ՝ 27 կմ, Շահումյան՝ 28 կմ, Նորակերտ՝ 38 կմ:
- Տեղումների տարեկան միջին քանակությունը 250–300 մմ է:
- Միջին ջերմաստիճանը՝ + 11.7 °C:
- Խոնավությունը 62% է:
- Էջմիածին քաղաքում են գտնվում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, Հայ առաքելական եկեղեցու կաթողիկոսական նստավայրը, ինչպես նաև «Ռասար» գործարանը և «Արմենիա միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ-ն:

Ջրամատակարարման կառուցվածքները

«Բազմադրյուր» և «Ղազարավան» կապտաժներ (11), «Բազմադրյուր» և «Ղազարավան» խորքային հորեր (3): Աղբյուրի ջուրը կարող է օգտագործվել խմելու և կենցաղային նպատակներով և դրա համար միայն քլորացում է պահանջվում: Քլորացումն իրականացվում է քլորացման երկու կայանների միջոցով, որոնք զինված են «ALLDOS» դոզավորիչ սարքավորմամբ:

«Շահումյան» ՕԿՁ-ներից, որոնք ունեն 1x6000 մ³ և 2x2000 մ³ թողունակություն, ջուրը մատակարարվում է Էջմիածին քաղաքին: ՕԿՁ-ները գտնվում են 921 մ բարձրության վրա:

3000-600 մմ տրամագծով գլխավոր մայր ջրատարի երկարությունը 136 կմ է:

Վերոնշյալ ՕԿՁ-ներից ջուրը մատակարարվում է Էջմիածին քաղաքի 105 կմ երկարությամբ բաշխիչ ցանցին, որը բաղկացած է 50-200 մմ տրամագծով թուջե և պոլիէթիլենային խողովակներից: Ջուրը



ՀԱՅՁՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

գյուղական համայնքների 20 կմ երկարությամբ, 50–150 մմ տրամագծով պողպատե և թուջե բաշխիչ ցանցին հասցվում է առանց ՕԿՁ-ների:

Կեղտաջրերի հավաքման (հեռացման) համակարգերը

Կեղտաջրերի հավաքման (հեռացման) համակարգերում ոչ մի ներդրում չի կատարվել:

Բնակչության 88%-ը միացված է ջրահեռացման համակարգին:

Քաղաքն ունի կեղտաջրերի հավաքման կենտրոնացված համակարգ, գլխավոր կոլեկտոր, ինչպես նաև կեղտաջրերի մաքրման չգործող կայաններ: Կեղտաջրերն առանց մաքրման արտանետվում են Քասախ գետը: Կեղտաջրերի արտանետման համակարգի խողովակաշարերը և դիտահորերը գտնվում են տեխնիկապես վատ վիճակում:

Այգեշատ, Դաշտ, Շահումյան և Նորակերտ գյուղերը չունեն ջրահեռացման համակարգ, և տնային տնտեսություններն օգտագործում են կլանող հորատանցքեր:

ՀՁԾ-ի շրջանակներում իրականացվող բարելավման աշխատանքները

Էջմիածին քաղաք

Ջրամատակարարման բաշխիչ ցանցի գոտիավորում

50-200մմ տրամագծով, 30 կմ երկարությամբ ջրամատակարարման բաշխիչ ցանցի վերականգնում՝ բակային և անհատական պոմպերից խուսափելու համար:

«Նոյակերտ–Բաղրամյան–Այգեկ» մայր ջրատարի 300 մմ տրամագծով, 4 կմ երկարությամբ թուջե հատվածի վերականգնում՝ 15/20 լ/վրկ կորստից խուսափելու համար:

Այգեշատ, Դաշտ, Շահումյան և Նորակերտ գյուղեր

Այգեշատ գյուղի 50–110 մմ տրամագծով և մոտավորապես 3 կմ երկարությամբ ջրամատակարարման բաշխիչ ցանցի վերականգնում:

Դաշտ գյուղի 50–110 մմ տրամագծով և մոտավորապես 3 կմ երկարությամբ ջրամատակարարման բաշխիչ ցանցի վերականգնում:



ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Շահումյան գյուղի 50–110 մմ տրամագծով և մոտավորապես 5 կմ երկարությամբ ջրամատակարարման բաշխիչ ցանցի վերականգնում:

Շահումյան գյուղի 110 մմ տրամագծով և մոտավորապես 1,3 կմ երկարությամբ մայր ջրատարի արտաքին ցանցի հիմնանորոգում:

Գյուղերին ջուր մատակարարող մայր ջրատարները միացնող կետերում ջրամատակարարման բաշխիչ նոր ցանցերի նորոգում և կառուցում:

Գ. ԱՇՏԱՐԱԿԻ ԵՆԹԱԾՐԱԳԻՐ

Գործող համակարգի նկարագրությունը

Աշտարակ քաղաքի, Օհանավան, Կարբի, Կարին, Սասունիկ, Ագարակ և Մուղնի գյուղերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի շահագործումն ու սպասարկումն իրականացվում է «ՀԶԿԸ» ՓԲԸ-ի «Կենտրոն–Արևմտյան» տարածքային մասնաճյուղի «Աշտարակ» տեղամասի կողմից:

Մշտական բնակիչների ընդհանուր թիվն Աշտարակ քաղաքում և Մուղնի գյուղում կազմում է 21475, Օհանավան գյուղում՝ 2254, Կարբի գյուղում՝ 3624, Կարբի գյուղում՝ 310, Սասունիկ գյուղում՝ 2280, Ագարակ գյուղում՝ 1655:

Բաժանորդների թիվն Աշտարակ քաղաքում կազմում է 6806, Օհանավան գյուղում՝ 498, Կարբի գյուղում՝ 502, Կարին գյուղում՝ 142, Սասունիկ գյուղում՝ 582, Ագարակ գյուղում՝ 81, Մուղնի գյուղում՝ 341, սպառողների ընդհանուր թիվը կազմում է 8952:

Ջրաչափ ունեցող բաժանորդների թիվը՝ Աշտարակ քաղաքում կազմում է 5840, Օհանավան գյուղում՝ 412, Կարբի գյուղում՝ 111, Կարին գյուղում՝ 113, Սասունիկ գյուղում՝ 490, Ագարակ գյուղում՝ 66, Մուղնի գյուղում՝ 277, սպառողների ընդհանուր թիվը կազմում է 7309:

Աշտարակ քաղաքի ջրամատակարարումն ապահովվում է «Սաղմոսավան» և «Արտաշավան» աղբյուրներից, Կարբիի խորքային հորերից և «Արտակ» աղբյուրներից սնվող պոմպակայանի միջոցով:

Օհանավան, Կարբի, Կարին, Սասունիկ, Ագարակ և Մուղնի գյուղերին ջրամատակարարումն ապահովվում է նաև «Սաղմոսավան» և «Արտաշավան» աղբյուրներից սնվող համակարգի միջոցով: Գլխավոր մայր ջրատարերն անցնում են գյուղերի զարգացած և մասնավորեցված տարածքներով, որտեղ իրականացվել են բազմաթիվ միացումներ: Գյուղերը չունեն ՕԿՁ-ներ: Այդ իսկ պատճառով համակարգի միջոցով մատակարարվող ջրի մեծ կորուստ է տեղի ունենում նախքան ջրի՝ Աշտարակ քաղաքի ՕԶԿ-ներ հասնելը: Ջրի կորուստը կազմում է մինչև 90–95%:

Աշտարակ քաղաքում և մնացած գյուղերում, բացառությամբ Սասունիկ և Կարին գյուղերի, ջրամատակարարման միջին տևողությունն օրական 18 ժամ է, մինչդեռ Սասունիկ և Կարին գյուղերի



ՀԱՅՁՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ջրամատակարարումը 4-5 ժամ է: Ամռանը բնակելի շենքերի 3-րդ հարկի ջրամատակարարումը լուրջ տեխնիկական խնդիր է:

Ազարակ գյուղի ջրամատակարարումն ապահովվում է համայնքի սեփականությունը հանդիսացող տեղական ջրամատակարարման համակարգի միջոցով: Գյուղի մեկ շրջանի ջրամատակարարումն ապահովվում է «Բազմաջրի» և «Ջազարավանի» աղբյուրներից սնվող գլխավոր մայր ջրատարին միացված «Ազարակ-Կոշ» մայր ջրատարից՝ ջուր մատակարարելով Էջմիածին քաղաքին և հարակից գյուղերին:

Ջրամատակարարումն Աշտարակ քաղաքում ապահովվում է 35 կմ երկարությամբ գլխավոր մայր ջրատարով և 82 կմ երկարությամբ ջրամատակարարման բաշխիչ ցանցով, Օհանավան գյուղում՝ 20 կմ, Կարբի գյուղում՝ 8 կմ, Մուղնի գյուղում՝ 15 կմ, Սասունիկ գյուղում՝ 15 կմ, Կարին գյուղում՝ 4 կմ երկարությամբ ջրամատակարարման բաշխիչ ցանցով: Սասունիկ և Կարին գյուղերի համար կառուցվել է երկու 800 մ³ տարողությամբ ՕԿՋ-ներ, որոնցից մեկը կոտրված է և չի գործում:

Համայնքներում ջրամատակարարման համակարգերը գտնվում են տեխնիկապես վատ վիճակում, տեղադրված կափույրներից շատերը չեն աշխատում, ջրամատակարարման ցանցի գոտիավորում արված չէ, ջրամատակարարման խափանումներ շատ հաճախ են տեղի ունենում, ցանցերում ջրի կորստի մակարդակը բարձր է:

Իրականացված աշխատանքները

Աշտարակ քաղաքում վարկային միջոցներով իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- Սաղմոսավանքի կապտաժների տարածքում կառուցվել է 15 լ/վրկ տարողությամբ երկու նոր կապտաժ.
- մեկ գործող կապտաժային կառուցվածք հիմնանորոգվել է.
- Կարբիի խորքային հորերի հիմնական կառուցվածքները վերակառուցվել են.
- Կարբիի խորքային հորերի տարածքում կառուցվել է կոնտակտային ավազան.
- քաղաքի ՕԿՋ-ները վերանորոգվել են.
- քաղաքի ջրամատակարարման բաշխիչ ցանցի 4700 մ երկարությամբ խողովակաշարը վերակառուցվել է.
- իրականացվել են մոտավորապես 305 ներտնային միացումներ:

Նշված աշխատանքներն իրականացվել են, ըստ էության, հիմնական կառուցվածքներում, իսկ 35-40 տարի առաջ կառուցված ջրամատակարարման բաշխիչ ցանցը միայն մասամբ է վերանորոգվել: Ջրամատակարարման համակարգերի արդիականացման համար անհրաժեշտ է ամբողջությամբ վերակառուցել ջրամատակարարման բաշխիչ ցանցը՝ ինքնահոս ջրամատակարարման գոտիներում ներառելով հնարավորինս շատ բնակավայրեր:



Շրջակա միջավայրի ելակետային իրավիճակը

Աշտարակ քաղաքը Երևան քաղաքից գտնվում է 20 կմ հյուսիս-արևմուտք:

- Տեղումների տարեկան միջին քանակությունը 300–400 մմ է:
- Ամռանը միջին ջերմաստիճանը +25-26° C է, իսկ ձմռանը՝ - 4° C:
- Արագածոտնի մարզում կան հետևյալ հատուկ պահպանվող տարածքներ՝ «Արագածի այլայան» պետական արգելավայրը, ինչպես նաև բնության 24 հուշարձան: Այնուամենայնիվ, Աշտարակի ենթածրագիրը հատուկ պահպանվող տարածքների հարևանությամբ չի իրականացվելու:
- Մարզի տարածքով հոսում է հինգ գետ՝ Քասախը, Հալավարը, Գեղարտը, Շահվերդը և Ամբերը, որն ամենամեծ գետն է, ունի 1480 կմ² մակերես և 89 կմ երկարություն:

Կեղտաջրերի հավաքման (հեռացման) համակարգերը

Կեղտաջրերի հավաքման (հեռացման) համակարգերում ոչ մի ներդրում չի կատարվել:

Աշտարակ քաղաքի կեղտաջրերի մաքրման կայանը մոտավորապես 20 տարի է, ինչ չի գործում:

Այն շրջանները, որտեղ ջրահեռացման համակարգ չկա, կեղտաջրերն արտանետվում են կլանող հորատանցքեր առանց սանիտարական նորմերի պահպանման:

Օհանավան, Կարբի, Կարին, Ագարակ և Մուղնի գյուղերը չունեն ջրահեռացման համակարգ, և տնային տնտեսություններն օգտագործում են կլանող հորատանցքեր: Գյուղական բոլոր համայնքներից միայն Սասունիկ գյուղն ունի ջրահեռացման համակարգ, որը միացված չէ գլխավոր կոլեկտորին, և կեղտաջրերն առանց մաքրման արտանետվում են գետը:

ՀՁՕ-ի շրջանակներում իրականացվող բարելավման աշխատանքները

- Ջրամատակարարման բաշխիչ ցանցի վերականգնում, սեփականության տարածքում գտնվող ջրաչափական հորերում ջրաչափերով նոր ներտնային միացումների իրականացում.
- ջրի ճնշումն առավել լավ կարգավորելու համար Աշտարակ քաղաքի և գյուղերի մանրամասն գոտիավորում.
- օրվա կարգավորիչ ջրամբարների (ՕԿՁ) և դրանց կարգավորման հորերի վերանորոգում (լողանավոր կափույրներով և ջրաչափերով ներս մտնող և դուրս եկող խողովակների նոր ձգատողնակների տեղադրում):

3.4 ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ

3.4.1 Իրավական համակարգը

Ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքները կարգավորող և բնապահպանության ոլորտի պետական մարմինների կողմից կիրառվող ՀՀ օրենքներն են՝



- «Բնության պահպանության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության հիմունքների մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 1991 թվականին).
- ՀՀ ջրային օրենսգիրք (ընդունվել է 2002 թվականին).
- ՀՀ հողային օրենսգիրք (ընդունվել է 2001 թվականին).
- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 1995 թվականին).
- «ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենք (ընդունել է 1992 թվականին).
- «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 1998 թվականին)

(i) «Բնության պահպանության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության հիմունքների մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 1991 թվականին).

«Բնության պահպանության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության հիմունքների մասին» ՀՀ օրենքով (1991 թվական) սահմանվում է Հայաստանում շրջակա միջավայրի պաշտպանության քաղաքականությունը: Դրա նպատակը Հայաստանի տարածքում շրջակա միջավայրի պաշտպանության և դրա օգտագործման պետական կարգավորման ապահովումն է: Այն իրավական հիմք է ապահովում ընդերքի, անտառների, բուսական ու կենդանական աշխարհի և շրջակա միջավայրի պաշտպանությունն ու օգտագործումը, ինչպես նաև մթնոլորտային օդի պահպանությունը կարգավորող շրջակա միջավայրի մասին օրենսդրության մշակման համար:

(ii) ՀՀ ջրային օրենսգիրք (ընդունվել է 2002 թվականին).

- Ջրային ռեսուրսների կառավարման համապատասխան մեխանիզմների ստեղծումը.
- ջրային ռեսուրսների պահպանումն ու պաշտպանությունը՝ ապահովելով աղտոտման նվազեցումը, ջրերի ստանդարտների ու ազգային ջրային պաշարի մակարդակի պահպանումը և վերահսկողության իրականացումը.
- ջրերի վնասակար ներգործության կանխարգելումը.
- ջրային ռեսուրսների հաշվառման ապահովումը.
- բնակչությանն ու տնտեսությանը կարգավորվող սակագներով անհրաժեշտ քանակի և որակի ջրով ապահովումը.
- ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի անվտանգ ու անխափան աշխատանքը և դրանց օգտագործման ու պահպանման բնականոն պայմանների ապահովումը և վերահսկողության իրականացումը.
- ջրային համակարգերի կառավարման կազմակերպումը, պահպանումը և զարգացումը:

(iii) ՀՀ հողային օրենսգիրք

Նշված օրենսգրքով կարգավորվում են սանիտարական պահպանության գոտիների սահմանմանը և ռեժիմին ներկայացվող պահանջները:



(iv) «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 1995 թվականին).

Ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների ծրագրերի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննությունը պարտադիր գործունեություն է: Սույն օրենքի նպատակն է նվազագույնի հասցնել գործունեության այն տեսակները, որոնք վնասակար ազդեցություն ունեն մարդու առողջության, շրջակա միջավայրի, տնտեսական և սոցիալական զարգացման վրա, այդ թվում՝ գործունեության այն տեսակները, որոնք կապված են ջրամբարների, պատվարների, ամբարտակների, խոշոր ջրանցքների, մղիչ կայանների և այլ ջրատնտեսական կառույցների կառուցման և շահագործման, ինչպես նաև ստորերկրյա ջրերի արդյունահանման, վերակառուցման աշխատանքների և կեղտաջրերի մաքրման կայանների կառուցման հետ:

(v) «ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենք, 16-րդ և 23-րդ հոդվածներ

Սույն օրենքի 16-րդ հոդվածով սահմանվում են ջրամատակարարմանը և ջրօգտագործմանը վերաբերող հիմնական պահանջները: Սույն օրենքի 23-րդ հոդվածով իրավական հիմք է ապահովվում շրջակա միջավայրում քիմիական և կենսաբանական արտանետումների և հոսքերի պարտադիր սանիտարահիգիենիկ փորձաքննություն իրականացնելու համար:

(vi) Ջրերի որակի ստանդարտներ (ընդունվել է 2002 թվականին)

Ջրամատակարարման և ջրօգտագործման համար խմելու ջրի պետական ստանդարտներն են՝
ա) N2-III-Ա2-2 սանիտարական կանոններ ու նորմեր, որոնցով սահմանվում են խմելու տնտեսական նշանակության ջրմուղների և ջրամատակարարման աղբյուրների սանիտարական պահպանման գոտիները:

բ) Որակի հսկողություն N2-III-Ա2-1 սանիտարական նորմեր և կանոններ, որոնցով սահմանվում են խմելու ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջները, ինչպես նաև ջրամատակարարման համակարգերով բնակելի տարածքների համար արտադրված և բնակելի տարածքներին մատակարարվող խմելու ջրի որակին հսկողության կանոնները:

(vii) Բնակչության համար խմելու ջրի մատակարարման նվազագույն նորմա սահմանող՝ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշում

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (ՀՕԿՀ) տարեկան երկու անգամ (ապրիլ և հոկտեմբեր ամիսներին) ստորագրում է որոշում, որով սահմանվում է բաժանորդների այն տոկոսը, որը պետք է ապահովված լինի ջրամատակարարման նվազագույն օրական նորմայով: Օրական նվազագույն նորման կազմում է 4 ժամ: ՀՕԿՀ-ի վերջին որոշման համաձայն՝ ՀՋԿԸ-ն պարտավորվում է բաժանորդների 96%-ին ապահովել 4-ժամյա և դրանից ավելի օրական ջրամատակարարմամբ, ինչը նշանակում է, որ պետք է հասնել նրան, որ բոլոր սպառողներն ունենան օրական առնվազն 4-ժամյա ջրամատակարարում: Իհարկե, մենք պարտավորվում ենք բաժանորդների որոշ տոկոսի համար ապահովել 6-ժամյա, 8-ժամյա ջրամատակարարում:

(viii) «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 1998 թվականին)



Սույն օրենքը Հայաստանում նման հուշարձանների պահպանության և օգտագործման իրավական և պետական քաղաքականության հիմքն է: Այն կարգավորում է դրանց պահպանության և օգտագործման ընթացքում ծագող հարաբերությունները: Ի թիվս սույն օրենքի 15–րդ հոդվածով սահմանված միջոցառումների՝ դրանով սահմանվում են նաև հուշարձանների հայտնաբերման և պետական հաշվառման միջոցառումները, հուշարձանների պահպանության գոտիների սահմանումը և պատմամշակութային արգելոցների ստեղծումը: Օրենքի 22–րդ հոդվածի համաձայն՝ հուշարձաններ ներառող տարածքներում շինարարական, գյուղատնտեսական և այլ կարգի աշխատանքների համար հողի հատկացումները հաստատվում են լիազորված մարմնի կողմից (Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալություն):

(ix) Միջազգային կոնվենցիաները

Հայաստանն ստորագրել կամ վավերացրել է մի շարք միջազգային բնապահպանական կոնվենցիաներ, այդ թվում՝

- «Անդրսահմանային համատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» կոնվենցիա (Էսպոյի կոնվենցիա, 1991 թվական).
- «Ջրային ռեսուրսների և կայուն զարգացման մասին» դուբլինյան հայտարարություն (1992 թվական).
- «Համաշխարհային մշակութային և բնական ժառանգության պահպանության մասին» կոնվենցիա (1993 թվական).
- «Շրջակա միջավայրի հարցերին առնչվող տեղեկությունների մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիա (Օրհուս, Դանիա, 1998 թվական):

3.4.2 Բնաստիտուցիոնալ համակարգը

Հայաստանում ՁՏՊԿ–ն ջրի կառավարման համար պատասխանատու առաջին գործակալությունն է, մինչդեռ ջրային ռեսուրսների և բնության պահպանության ու կառավարման, այդ թվում՝ վտանգավոր թափոնների կառավարման գործառնությունները վերապահված են Բնապահպանության նախարարությանը (ԲՆ): ԲՆ–ի ներքո գործող Ջրային ռեսուրսների կառավարման գործակալությունը (ՋՌԿԳ) պատասխանատու է Հայաստանում ջրօգտագործման թույլտվությունների տրամադրման համար: Ավելին, Առողջապահության նախարարությունը (ԱՆ) առաջատար դերակատարություն ունի մալարիայի և ջրի միջոցով փոխանցվող այլ հիվանդությունների տարածումը վերահսկելու հարցում: Տեղական և տարածքային մարմինները պատասխանատու են իրենց իրավասության ներքո գտնվող բնական ռեսուրսների օգտագործման և պահպանության համար:

ա) Ջրային տնտեսության պետական կոմիտե

Ջրային տնտեսության ոլորտի ընկերությունների ֆինանսական վերականգնման, դրանց կողմից բաժանորդներին մատուցվող ծառայությունների որակի բարելավման, սակագնային քաղաքականության կատարելագործման և ոլորտում տնտեսական բարեփոխումների իրականացման նպատակով Հայաստանի Հանրապետության Կառավարությունը որոշեց ստեղծել ՀՀ Կառավարությանն առընթեր



ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ջրային տնտեսության պետական կոմիտեն (ՀՀ Կառավարության 2001 թվականի փետրվարի 9-ի թիվ 95 որոշում): ՀՀ Կառավարության 2005 թվականի մայիսի 15-ի թիվ 633 որոշման համաձայն՝ ՀՋԿԸ-ն ընդգրկվեց ՀՀ տարածքային կառավարման նախարարության կազմում:

ՋՏՊԿ-ի կազմում ՀՋԿԸ-ն պատասխանատու է իր սպասարկման տարածքում ջրամատակարարման և կեղտաջրերի հեռացման համակարգերի շահագործման և տեխնիկական սպասարկման համար:

Ջրային տնտեսության պետական կոմիտեի գործառնություններն են՝

- ջրի վերաբերյալ ազգային ծրագրի և ջրային պաշարների պահպանման ու օգտագործման քաղաքականության մշակմանը մասնակցությունը.
- ըստ աղբյուրների և ջրօգտագործողների՝ ջրերի օգտագործման վերաբերյալ Կառավարությանը տարեկան հաշվետվությունների ներկայացումը.
- ոռոգման, խմելու ջրի, կեղտաջրերի հեռացման ոլորտում հիդրոտեխնիկական կառույցների շինարարության, տեխնիկական շահագործման, ջրի մատակարարման ու օգտագործված ջրերի հեռացման առևտրային գործունեություն իրականացնող ընկերություններում պետական բաժնեմասի, ինչպես նաև նշված ոլորտներում արտասահմանյան ֆինանսական աղբյուրների հաշվին ներդրումային ծրագրերն իրականացնող պետական հիմնարկների կառավարման լիազորությունների իրականացումը:

(i) *Բնապահպանության նախարարություն (ԲՆ)*

ԲՆ-ն պատասխանատու է Հայաստանի Հանրապետությունում բնական ռեսուրսների պահպանության, ողջամիտ օգտագործման ու վերարտադրության, ինչպես նաև շրջակա միջավայրի բարելավման համար: Նշված ոլորտներում ԲՆ-ի իրավասությունն է ազգային քաղաքականության մշակումը վերահսկելը, բնապահպանական ստանդարտների և ուղեցույցների մշակումն ու կիրառումը: ԲՆ-ն նշված գործառնություններն իրականացնում է հետևյալ կառուցվածքային ստորաբաժանումների միջոցով՝

- Բնապահպանական ռազմավարական ծրագրերի ու մոնիթորինգի վարչություն.
- Ընդերքի և հողերի պահպանության քաղաքականության վարչություն.
- Վտանգավոր նյութերի և թափոնների քաղաքականության բաժին.
- Ջրային ռեսուրսների քաղաքականության բաժին.
- Կենսաբազմազանության քաղաքականության բաժին.
- Մթնոլորտային օդի քաղաքականության բաժին.
- Իրավաբանական վարչություն.
- Հասարակայնության հետ կապերի բաժին և այլն:

ԲՆ-ն մի շարք այլ գործառնություններ իրականացնում է նաև առանձնացված ստորաբաժանումների միջոցով՝

- Ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն (ՋՌԿԳ).
- Կենսատեսուրսների կառավարման գործակալություն.
- Թափոնների և մթնոլորտ արտանետումների կառավարման գործակալություն.
- Բնապահպանական պետական տեսչություն:



ԲՆ–ի կազմում գործող ՋՌԿԳ–ն ջրային ռեսուրսների կառավարման համար պատասխանատու հիմնական մարմինն է, որն իրականացնում է ջրի ազգային քաղաքականության և ջրի ազգային ծրագրի մշակումը, ջրային ռեսուրսների՝ ըստ օգտագործման գործառույթի և կարգավիճակի դասակարգումը, ջրերի ստանդարտների մշակմանը մասնակցությունը և դրանց կիրառման նկատմամբ վերահսկումը, ջրօգտագործման թույլտվությունների տրամադրումը:

Բնապահպանական պետական տեսչությունը (ԲՊՏ) պատասխանատու է բնապահպանական օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ տեսչական վերահսկողության իրականացման համար:

ԲՆ–ի կազմում գործում են հետևյալ ՊՈԱԿ–ները

- «Տեղեկատվական վերլուծական կենտրոն» ՊՈԱԿ
- «Ազգային պարկ» ՊՈԱԿ–ներ
- «Պետական արգելոց» ՊՈԱԿ–ներ
- «Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ
- «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ (նմուշառման 131 դիտանցման կետերից հավաքում է ջրի որակի վերաբերյալ տվյալներ).
- «Թափոնների ուսումնասիրության կենտրոն» ՊՈԱԿ
- «Հիդրոերկրաբանական մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ

(ii) Առողջապահության նախարարություն (ԱՆ)

Պետական հիգիենիկ և հակահամաճարակային հսկողության տեսչության գործառույթներն են՝

- սանիտարական նորմերի և խմելու ջրի որակի ստանդարտների մշակման գործընթացին մասնակցությունը.
- առողջապահական բոլոր հարցերի համակարգումը.
- կազմակերպությունների և քաղաքացիների կողմից սանիտարական նորմերի, հիգիենիկ և հակահամաճարակաբանական միջոցառումների իրականացման նկատմամբ վերահսկողությունը:

(iii) Ջրի ազգային խորհուրդ

Ջրի ազգային խորհուրդը (ՋԱԽ) ջրային ռեսուրսների կառավարման բնագավառում բարձրագույն խորհրդատվական մարմինն է, որի աշխատակազմը բաղկացած է մի շարք նախարարությունների ներկայացուցիչներից: Խորհրդի հիմնական գործառույթը ջրի ազգային քաղաքականությանը և ջրի ազգային ծրագրին վերաբերող իրավական ակտերի վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելն է:

(iv) Վեճերը լուծող հանձնաժողով

Վեճերը լուծող հանձնաժողովը (ՎԿՀ) ստեղծվել է ՋԱԽ–ի կազմում, որն իրավասու է լուծելու ջրային հարաբերություններում ջրօգտագործման թույլտվություններին առնչվող վեճերը:



(v) Կարգավորող հանձնաժողով

Կարգավորող հանձնաժողովը (ԿՀ) պատասխանատու է ջրային հարաբերություններում սակագնային քաղաքականության սահմանման և ջրային համակարգերի օգտագործման թույլտվություններ տալու համար:

3.5 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԱՍՑԵԱԳՐՈՒՄԸ

Ակնկալվում է, որ գործող ջրամատակարարման համակարգերի վերականգնումը և դրա հետ կապված ծախսերը կատարվեն ՀԾԾ-ի ֆինանսավորմամբ՝ ՀԶԿ-ի կառավարումը և շահագործումը բարելավելու համար: Այն պետք է նպաստի կյանքի որակի և շրջակա միջավայրի բարելավմանը: Մասնավոր օպերատորը հատուկ ներդրումային ծրագրեր կսահմանի միայն ծրագրի իրականացման ընթացքում, որոնք կհաստատվեն ՀԲ-ի կողմից: Թեև ծրագրով նախատեսված չեն խոշոր չափի լրացուցիչ կառույցներ, այնուամենայնիվ, որոշ վերակառուցումներ կարող են հանգեցնել նոր սարքավորումների տեղադրմանը: Ծրագրի շրջանակներում չի ակնկալվում հողի ձեռքբերում, քանի որ աշխատանքի հիմնական մասը կիրականացվի ՀԶԿ-ի սեփականությունը հանդիսացող տարածքներում, համայնքային հողերում կամ համայնքային տնտեսությանն արտոնյալ տարանցման իրավունքով հատկացված տարածքներում: ՀԶԿ-ի կողմից մշակված ՇՄԿԾԾ-ի ընդհանուր նպատակը ՀԶԿ-ի տարեկան աշխատանքային ծրագրի մշակումն ու իրականացումն ուղղորդելն է, դրանում նաև տեղ են գտել ՀՀ-ում գործող բնապահպանական ուղեցույցներն ու ստանդարտները:

3.6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ և ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՂՄԱՅՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Մասիսի, Էջմիածնի և Աշտարակի ենթածրագրերի իրականացումը շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա կարող է բացասական և դրական ազդեցություններ ունենալ:

Կանխորոշվում է հետևյալ դրական ազդեցությունը համայնքի սոցիալական պայմանների և առողջության վրա՝

Հնարավոր դրական ազդեցություն՝

- **Հանրային առողջապահության բարելավում.** Ծրագիրը բարելավում է ջրի հասանելիությունը և սպառողներին տրամադրվող ջրի ֆիզիոլոգիական և մանրէաբանական որակը, որը պետք է հանգեցնի ջրից ծագող հիվանդությունների կրճատմանը և հանրային առողջապահության ընդհանուր բարելավմանը:
- **Հանրության սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավում.** Ծրագրի արդյունքում կբարելավվի բնակչության՝ ծրագրով նախատեսված սոցիալ-տնտեսական իրավիճակը:
- **Ջրամատակարարման համակարգի վերանորոգումը և բարելավված շահագործումը կապահովի ջրի խնայողություն և խմելու ջրի բարձր որակ՝ նվազեցնելով աղտոտվածության վտանգը.**



ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Օգտագործվող չմաքրված ջրի հնարավոր կրճատումը կարող է բարելավել ջրի ռեսուրսների օգտագործման կայունությունը, իսկ հոսակորստի կարգավորումը և հսկողությունը կկանխի ջրի աղտոտումը և սողանքների և էրոզիոն գործընթացների ակտիվացումը:

- **Պոմպակայանների վերականգնումը և անցումը ինքնահոս ջրամատակարարմանը** թույլ կտա նվազեցնել օգտագործվող էլեկտրաէներգիայի քանակը:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման (ՇՄԱՆԳ) համաձայն Մասիս, Էջմիածին և Աշտարակ ենթածրագրերի տարածքներում ջրամատակարարման համակարգի բարելավման հետևանքով լանդշաֆտների, բուսական և կենդանական աշխարհի վրա նշանակալից, երկարաժամկետ և (կամ) անվերականգնելի բացասական ազդեցություն չի կանխորոշվում:

Հնարավոր բացասական ազդեցությունը հիմնականում ակնկալվում է շինարարության փուլի ժամանակ, որը սահմանափակ և կարճաժամկետ է: Դրանք կանխելու համար կմշակվեն մեղմացնող միջոցառումներ և կներառվեն շրջակա միջավայրի կառավարման և դիտանցման ծրագրերում (ՇՄԿԴՕ), իսկ վերահսկող մարմինները պետք է հետևեն այդ ծրագրին:

Պոտենցիալ բացասական ազդեցությունը և այն մեղմացնող միջոցառումները

Հողի էրոզիան և ապարների տեղաշարժը կանխելու համար պետք է ձեռնարկել հետևյալը՝ Ջրագծի՝ գառիթափ ռելիեֆով հատվածներում իրականացնել միջոցառումներ հողի էրոզիան և նստվածքների տեղաշարժը կանխելու նպատակով, նվազեցնել այն ժամանակը, որի ընթացքում ջրատար խողովակների կցորդման մասի կարգաբերման և չափման համար բացվում են խրամուղիներ և հորեր:

Շինարարական գործողությունների ավարտից հետո, նախագծի համաձայն, հնարավորինս շուտ վերականգնել այն տարածքները, որտեղ աշխատանքներ են կատարվել:

- բարձրորակ կերպով վերականգնել փողոցների ասֆալտաբետոնային ծածկը,
- վերականգնել վնասված ասֆալտաբետոնային փողոցների կոպձային ծածկը և կոպձածածկ փողոցները:

Հողային և ջրային ռեսուրսների՝ վառելիքով և քսայուղերով աղտոտումը բացառելու համար վերջիններս պետք է հերմետիկորեն պահեստավորվեն, իսկ տրանսպորտային միջոցները պետք է շահագործվեն ջրային ռեսուրսներից որոշակի հեռավորության վրա. պետք է նախատեսել հատուկ կոնտեյներներ դրանք հավաքելու համար, որենք կտեղափոխվեն հատուկ տարածքներ՝ վերամշակման համար:

Հողային և ջրային ռեսուրսների՝ քլորով աղտոտումը բացառելու համար ջրամատակարարման բաշխման ցանցը քլորով մաքրելու աշխատանքները կկազմակերպվեն սահմանված տեխնիկական ուղեցույցների համաձայն: Կտրամադրվեն համապատասխան տեխնիկական միջոցներ. խողովակները լվանալուց հետո



մակերևութային ջրային օբյեկտ կամ հողատարածք քլորի արտանետումը իրականացնել խստագույնս նախագծով նախատեսված պարբերականությամբ և սահմանված կանոնակարգերի համաձայն: Մատակարարված ջրի որակի, ներառյալ՝ քլորի մնացորդային մակարդակի նկատմամբ կիրականացվի հսկողություն:

Շինարարական և կենցաղային թափոններով շրջակա միջավայրի աղտոտումը կանխելու համար՝ շինարարական հրապարակում շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսվելու է շինարարական թափոնների հավաքման համար հատուկ տարածք, ինչպես նաև շինարարության հրապարակում տեղադրվելու են փակ աղբադուլեր՝ կենցաղային թափոնների համար: Վերջապես հեռացնել շինարարական թափոնները համայնքների համար նախատեսված աղբավայր, նախապես համայնքի ղեկավարների կամ աղբավայրերի շահագործողների հետ գրավոր համաձայնության գալով:

Ասբեստ պարունակող թափոնների տնօրինման և հեռացման հետ առնչվող վտանգներից խուսափելու համար՝ ջրամատակարարման ցանցի մասերը, որոնք կառուցված են ասբեստ խողովակներից, պետք է փոխարինվեն նոր խողովակներով՝ առանց շահագործումից հանված ասբեստ խողովակները հանելու: Նոր խրամուղիներ պետք է փորվեն առկա խողովակներին զուգահեռ նոր խողովակներ տեղադրելու համար: Առկա խողովակների նշագծերը պետք է հստակորեն ընդգծվեն մինչև հորատում իրականացնելը, այնպես, որ դրանք պատահականորեն չվնասվեն: Եթե հողային աշխատանքների ընթացքում, այնուամենայնիվ, ասբեստ խողովակներ պատահեն, հորատումներն անմիջապես պետք է դադարեցվեն և նոր խողովակների տեղադրման վայրերը պետք է վերանշագծվեն:

Շինարարական աշխատանքների ընթացքում փոշին նվազեցնելու համար շինարարական հրապարակը և ճանապարհները պետք է պարբերաբար ջրցանվեն, իսկ աղմուկը կանխելու համար գիշերային աշխատանքները բնակավայրերում պետք է սահմանափակ լինեն. աղմուկ հանող մեքենաների/սարքավորումների օգտագործումից պետք է խուսափել, անհրաժեշտության դեպքում պետք է տեղադրվեն խլացուցիչներ:

Ճանապարհների ծանրաբեռնվածության հետևանքով բնակչությանը քիչ անհանգստություն պատճառելու համար բեռնատարերի համար անվտանգ տեղեր պետք է առանձնացվեն, շինարարական հրապարակում թափոնները չպետք է կուտակվեն և այրվեն, շինարարությունը պետք է փուլերով անցկացվի, շինարարական աշխատանքների մասին համապատասխան ծանուցում պետք է տրվի բնակչությանը, ճանապարհների վրա դրվեն համապատասխան ճանապարհային նշաններ, կառուցվեն շրջանցիկ ճանապարհներ կամ արգելապատնեշներ: Ապահովել համայնքի մասնակցությունը ենթածրագրերի նախագծմանը, որը կնվազեցնի համայնքի կենսագործունեության խոչընդոտները:

Շինարարության ժամանակ աշխատողներին և բնակչությանը սպառնացող վտանգները կանխելու համար, պետք է ձեռնարկվեն հետևյալ միջոցառումները՝ ցանկապատել շինարարական հրապարակը,



ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

արգելել կողմնակի անձանց մուտքը տարածք, նախագգուշական նշաններ տեղադրել վտանգավոր վայրերում, իրականացնել սարքավորումների պարբերական ուսումնասիրություն բարձրակարգ մասնագետների կողմից, ինչպես նաև պարբերաբար իրականացնել անվտանգության ստուգումներ. անվտանգության հրահանգները պետք է ընդգրկվեն Շրջակա միջավայրի կառավարման և դիտանցման ծրագրում (ՇՁԿԴԾ)՝ որպես հավելված:

3.7. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՒՄ ՆԵՐԱՌՎԵԼԻՔ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԴՐՈՒՑԹՆԵՐ

Շինարարական փուլի ազդեցությունների մեծ մասը հնարավոր է մեղմացնել շինարարական աշխատանքների մասին պայմանագրերում համապատասխան դրույթներ ընդգրկելու դեպքում: Դրույթները պետք է վերաբերվեն, ի թիվս այլոց, հետևյալ հարցերին՝

- շրջակա միջավայրին առնչվող ազգային ընդհանուր ուղեցույցների պահպանմանը,
- պայմանագրին կցված Շրջակա միջավայրի կառավարման և մոնիտորինգի պլան համապատասխանության ապահովմանը,
- պատմամշակութային հուշարձանների պահպանությանը,
- շինարարության և հորատման արդյունքում գոյացած թափոնների պաշտոնապես թույլատրված հեռացում,
- շինարարական հրապարակների թույլատրված տեղակայում:

3.8. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Շրջակա միջավայրի մասին ՀՀ օրենսդրությունը, որը կանոնակարգում է հասարակական քննարկումները և համակարգումը, ինչպես նաև հանրությանը տրամադրման ենթակա տեղեկատվությունը ներկայացվում է ստորև՝

- “Բնության պահպանության մասին հիմնադրույթների մասին” ՀՀ օրենքը սահմանվում է շրջակա միջավայրի իրավիճակի մասին ամբողջական տեղեկատվություն պահանջելու և այն ժամանակին ստանալու քաղաքացու իրավունքը:
- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքը սահմանում է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ընթացակարգը:

Նոր Ջրային օրենսգիրքը նույնպես անդրադառնում է հանրության մասնակցության սկզբունքներին: ՀՀ ԲՆ-ը, գործող օրենսդրության համաձայն, պարտավոր է ապահովել շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ենթակա բոլոր ոլորտների ենթածրագրերի մասին հանրային իրազեկությունը զանգվածային լրատվամիջոցների (հեռուստատեսության, ռադիոյի, ամսագրերի) միջոցով, ինչպես նաև ծանուցել տեղական իշխանություններին և շահագրգիռ հասարակական կազմակերպություններին ծրագրի բնապահպանական ասպեկտների մասին՝ հետագայում հաշվի առնելով նրանց կարծիքը ծրագրի պատրաստման և իրականացման փուլերում: Հաշվի առնելով վերոնշյալ օրենսդրության պահանջները, ինչպես նաև «Բ» կատեգորիայի բոլոր ենթածրագրերին վերաբերող ՀԲ ուղեցույցերը՝ ՀՁԿԸ-ն պարտավոր



Է տեղական համայնքներին և այլ շահառուներին ներկայացնել բոլոր ենթածրագրերի ՇՄԿԴ-ները՝ հասարակության կարծիքների ու մեկնաբանությունների ստացման և դրանց, նպատակահարմարության դեպքում, ենթածրագրերի նախագծերում և ՇՄԿՄՊ-ներում ներառելու նպատակով: Նախքան ծրագրերի իրականացման տարածքներում գտնվող խմբերի և տեղական հասարակական կազմակերպությունների հետ քննարկումները, ՀԶԿԸ-ն ժամանակին համապատասխան տեղեկություններ է տրամադրում նրանց այնպիսի եղանակով և լեզվով, որոնք մատչելի և հասկանալի են քննարկման կողմ հանդիսացող խմբի համար: Հասարակական քննարկումների արձանագրությունները պետք է կցվեն ՇՄԿԴ-ին:

3.9. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ և ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ

ՇՄԿՄՊ-ը հիմնվում է ներդրումների ծրագրի շրջանակում իրականացվող շրջակա միջավայրի ուսումնասիրության վրա և կընդգրկի համապատասխան մեղմացնող միջոցառումներ: ՇՄԿՄՊ-ը բաղկացած է երկու բաղադրիչից՝

1. Մեղմացնող միջոցառումները և իրականացման ինստիտուցիոնալ պարտավորություններ,
2. Շրջակա միջավայրի մոնիտորինգ :

Կապալառուն պետք է խստորեն հետևի շրջակա միջավայրի վրա ազդեցությունը մեղմացնող միջոցառումներին, ինչպես նախատեսված է ՇՄԿՄՊ-ում: ՇՄԿՄՊ-ով սահմանված՝ բոլոր միջոցառումների իրականացման համար նախատեսված ծախսերը ներառված են Պայմանագրի ողջ արժեքի մեջ:

Տեխնիկական վերահսկման ընկերության (ՏՎԸ) կամ Պատվիրատուի կողմից արձանագրված՝ ցանկացած միջոցառման իրականացման ձախողման մասին տեղեկությունը պետք է ուղարկվի Կապալառուին գրավոր ձևով՝ որպես ծանուցում:

- Շտկում կատարելու մասին ծանուցումից հետո գրանցված հաջորդ խախտման դեպքում վնասների դիմաց պարտադիր պետք է վճարվի՝ Պայմանագրի ամբողջ արժեքի 0,1 %-ի չափով: Վնասի փոխհատուցումը Կապալառուին չի ազատում խախտումը վերացնելու պարտավորությունից: Արձանագրված խախտումը պետք է վերացվի երկու աշխատանքային օրվա ընթացքում: Վնասների փոխհատուցման գումարները պահվում են հաջորդ Կատարման Հավաստագրով նախատեսված գումարներից, և շինարարական աշխատանքների ավարտից հետո արձանագրված խախտման համար վնասների գանձվելիք գումարը պահվում է պահուստային գումարներից:
- Խախտումների երեք դեպքից հետո Պայմանագիրը կարող է միակողմանիորեն լուծվել:



Մեղմացնող միջոցառումները և իրականացման ինստիտուցիոնալ պարտավորությունները

1-3 աղյուսակը ներկայացնում է շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները ջրամատակարարման համակարգերի վերականգնման և շահագործման ընթացքում: Յուրաքանչյուր հնարավոր ազդեցության համար 1-3 աղյուսակում նշվում են.

- առաջարկվող *մեղմացնող միջոցառումը (ներք),* և
 - այդ միջոցառումների իրականացման համար պատասխանատու կողմերը կամ գերատեսչությունները, որոնք բաժանվում են հետևյալ խմբերի.
- ✓ *Իրականացնող մարմիններ, որոնք պատասխանատու են տվյալ միջոցառման իրականացման համար,*
 - ✓ *Վերահսկող մարմիններ, որոնք պատասխանատու են իրականացնող մարմինների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար՝ ապահովելու վերջիններիս կողմից Շրջակա միջավայրի կառավարման և մոնիտորինգի պլանով (ՇՄԿՄՊ) նախատեսված միջոցառումների իրականացումը*
 - ✓ *Մոնիտորինգ իրականացնող մարմիններ, որոնք պատասխանատու են ՇՄԿՄՊ-ի իրականացման ծավալը և արդյունավետությունը դիտարկելու և, անհրաժեշտության դեպքում, ուղղումներ կատարելու համար*
 - ✓ *Մոնիտորինգ իրականացնող պետական մարմիններ, պետական կառույցներ, որոնք պատասխանատու են ծրագրերի ծավալը և արդյունավետությունը դիտարկելու համար:*

2. Բնապահպանական մոնիտորինգ

ՀԶԿԸ-ն, իր ԾԻՄ-ի միջոցով, ամբողջական պատասխանատվություն է կրում ՀԶԾ-ի շրջանակներում իրականացված աշխատանքների՝ շրջակա միջավայրին առնչվող օրենսդրության հետ համապատասխանության ապահովման համար և այս պատասխանատվությունից ելնելով՝ ապահովում է ծրագրի իրականացման ամենօրյա բնապահպանական վերահսկողություն: Ազգային օրենսդրության պահանջների համաձայն՝ ՀԶԿԸ/ԾԻՄ-ն վարձում է լիցենզավորված **Տեխնիկական վերահսկողության ընկերություն (ՏՎԸ)**՝ աշխատանքների տեխնիկական վերահսկողությունը՝ ներառյալ բնապահպանական դիտանցումն ապահովելու համար: ՀԶԿԸ-ի բնապահպանական հարցերով աշխատակազմը, որակի ապահովման նպատակով, վերահսկում է ՏՎԸ-ի կատարած աշխատանքը, ինչը ենթադրում է ՏՎԸ-ի ամսական հաշվետվությունների վերանայում, ինչպես նաև տրամադրված տեղեկատվության հաստատում ՀԶԿԸ-ի բնապահպանական հարցերով աշխատակազմի կողմից տեղում պարբերաբար կատարվող աշխատանքային այցերի միջոցով:

ԶՏՊԿ-ն, իր ՊԿԴՄ-ի միջոցով, ՀԶԾ-ի իրականացման ընդհանուր վերահսկողություն և աջակցություն ապահովելու ընթացքում հետևում է աշխատանքներ կատարող կապալառուների կատարողականին՝



ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ներառյալ ՇՄԿՄՊ-ներում նշված բնապահպանական վտանգների մեղմացման միջոցառումների իրականացմանը:

ՀՋԾ-ին առնչվող՝ դրա իրականացման շինարարության և շահագործման փուլերում համապատասխան թեմատիկ ասպեկտների վերահսկողություն իրականացնելու համար լիազորված տարբեր գծային գերատեսչություններն են.

- ՀՀ բնապահպանության նախարարության **Բնապահպանական պետական տեսչությունը,**
- ՀՀ առողջապահության նախարարության **Պետական հիգիենիկ և հակահամաճարակային հսկողության տեսչությունը,**
- ՀՀ մշակույթի նախարարության **Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գործակալությունը,** անհրաժեշտության դեպքում,
- ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը,
- Տեղական ինքնակառավարման մարմինները:



ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՑՈՒՂԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄԵՂՄԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԿՅԱՆՔԻՆ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆԸ ՍՊԱՌՆԱՅՈՂ ՎՏԱՆԳՆԵՐԻ ԿԱՆԽՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Աղյուսակ 1-3

<i>Հնարավոր բացասական ազդեցությունը</i>	<i>Ազդեցության մեղմացման և մոնիտորինգի գործողություններ</i>	<i>Իրականացնող մարմին</i>	<i>Վերահսկող մարմին</i>	<i>Իրականացման ժամանակահատված</i>	<i>Մոնիտորինգ իրականացնող պետական մարմին</i>
ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ, ԿԱՌՈՒՑՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ					
Շինարարություն և կենցաղային թափոնների (աղբի) գոյացումը և տեղափոխումը	Տեղական ինքնակառավարման մարմիններից և ՀՀ առողջապահության նախարարության համապատասխան վարչությունից կենցաղային թափոնների տեղափոխման համար համապատասխան թույլտվության ձեռքբերում:	Կապալառու	ՏՎԸ, ՀԶԿ ՓԲԸ	Նախքան շինարարական աշխատանքների մեկնարկը	ՀՀ բնապահպանության նախարարություն (ԲՆ) ՀՀ առողջապահության նախարարություն (ԱՆ) Տեղական ինքնակառավարման մարմիններ (ՏԻՄ)



ՀԱՅՁՐՄՈՒՂԿՈՑՈՒՂԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

	Շինարարական աշխատանքների ավարտից հետո սահմանված կարգով թափոնների հեռացման կազմակերպում դրանց հավաքման համար նախատեսված վայրերում	Կապալա- ռու	ՏՎԸ, ՀՋԿ ՓԲԸ	Շինարարական աշխատանքների ընթացքում և դրանց վերջնական ավարտից հետո	ՏԻՄ ՀՀ ԱՆ
Ժամանակա- վոր օդի աղտոտում/ փոշու գոյացում	Փոշիացող շինարարական նյութերի փոխադրման համար հատուկ ծածկով փոխադրամիջոցների օգտագործում	Կապալա- ռու	ՏՎԸ, ՀՋԿ ՓԲԸ	Շինարարական աշխատանքների ընթացքում	ՀՀ ԲՆ ՀՀ ԱՆ
	Բնակեցված տարածքներում շինհրապարակների կանոնավոր ջրցանում	Կապալա- ռու	ՏՎԸ, ՀՋԿ ՓԲԸ	Շինարարական աշխատանքների ընթացքում	ՏԻՄ ՀՀ ԱՆ
	Փոշոտ միջավայրում գտնվող աշխատողներին պաշտպանիչ միջոցների (դիմակների) տրամադրում	Կապալա- ռու	ՏՎԸ, ՀՋԿ ՓԲԸ	Շինարարական աշխատանքների ընթացքում	ՀՀ ԱՆ
Հողի և ջրային ռեսուրսների աղտոտում վառելիքով և քսայուղերով	Պահանջվող վառելիքի և քսայուղերի պահեստավորում մեկուսացված տարածքներում՝ հեռու ջրային ռեսուրսներից և բացառելով հողի հետ անմիջական շփումը	Կապալա- ռու	ՏՎԸ, ՀՋԿ ՓԲԸ	Շինարարական աշխատանքների ընթացքում	ՀՀ ԲՆ ՀՀ ԱՆ
	Հատուկ տարաների օգտագործում օգտագործված քսայուղերի հավաքման համար	Կապալա- ռու	ՏՎԸ, ՀՋԿ ՓԲԸ	Շինարարական աշխատանքների ընթացքում	ՀՀ ԲՆ ՀՀ ԱՆ



ՀԱՅՁՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

	և դրանց հետագա հեռացում՝ հատուկ կամ վերամշակման համար նախատեսված տարածքներ				
Աղմուկի և թրթռումների բացասական ազդեցություն	Շինարարական աշխատանքների կատարում աշխատանքային ժամերի ընթացքում և սահմանված կարգով խլացուցիչների օգտագործում	Կապալա- ռու	ՏՎԸ, ՀՋԿ ՓԲԸ	Շինարարական աշխատանքների ընթացքում	ՀՀ ԱՆ ՏԻՄ
	Շինարարական տեխնիկայի կանոնավոր ստուգում	Կապալա- ռու	ՏՎԸ, ՀՋԿ ՓԲԸ	Շինարարական աշխատանքների ընթացքում	ՀՀ ԱՆ ՏԻՄ
	Աղմկոտ միջավայրում աշխատող աշխատողներին աղմուկը խլացնող միջոցների (ականջակալների) տրամադրում	Կապալա- ռու	ՏՎԸ, ՀՋԿ ՓԲԸ	Շինարարական աշխատանքների ընթացքում	ՀՀ ԱՆ
Տնային տնտեսությունների և պատճառված անհարմարություններ	Անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան ճանապարհային նշանների և շրջանցման հարմարությունների տեղադրում	Կապալա- ռու	ՏՎԸ, ՀՋԿ ՓԲԸ	Շինարարական աշխատանքների ընթացքում	ՏԻՄ



ՀԱՅՁՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

	Շինարարական աշխատանքների վերաբերյալ համապատասխան տեղեկությունների տրամադրում Փոքր կամուրջների տեղակայում	Կապալա- ռու	ՏՎԸ, ՀՋԿ ՓԲԸ	Նախքան շինարարական աշխատանքների մեկնարկը, Շինարարական աշխատանքների ընթացքում	ՏԻՄ
Ազդեցությունը մշակութային և պատմական հուշարձանների վրա	Մշակութային արժեք ներկայացնող առարկաների հայտնաբերման դեպքում հողափորման աշխատանքների անհապաղ դադարեցում և համապատասխան տեղեկության հաղորդում Մշակութային ժառանգության պահպանության գործակալությանը	Կապալա- ռու	ՏՎԸ, ՀՋԿ ՓԲԸ	Շինարարական աշխատանքների ընթացքում	ՀՀ մշակույթի նախարարու- թյուն
Լանդշաֆտի աստիճանա- կան վատթարացում և հողի էրոզիա	Հողի վերին շերտի հեռացում առանձնացված տարածներ և դրա վերականգնում շինարարական աշխատանքների ավարտից հետո	Կապալա- ռու	ՏՎԸ, ՀՋԿ ՓԲԸ	Շինարարական աշխատանքների ընթացքում և դրանց ավարտից հետո	ՀՀ ԲՆ
	Ջրագծերի, ինչպես նաև կարգավորման և ջրաչափական հորերի համար խրամուղիները բաց վիճակում	Կապալա ռու	ՏՎԸ, ՀՋԿ ՓԲԸ	Շինարարական աշխատանքների ընթացքում և դրանց ավարտից հետո	ՀՀ ԲՆ



ՀԱՅՁՐՄՈՒՂԿՈՑՈՒՂԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

	պահելու համար ժամանակահատվածի հնարավորինս կրճատում				
	Գաբիոնների տեղադրում ջրագծերի անցկացման համար զառիթափ ռելիեֆով տարածքներում	Կապալառու	ՏՎԸ, ՀՋԿ ՓԲԸ	Շինարարական աշխատանքների ընթացքում և դրանց ավարտից հետո	ՀՀ ԲՆ
	Վնասված մակերևույթների վերականգնում հնարավորինս կարճ ժամանակահատվածում՝ ըստ նախագծի	Կապալառու	ՏՎԸ, ՀՋԿ ՓԲԸ	Շինարարական աշխատանքների ավարտից հետո	ՀՀ ԲՆ ՀՀ քաղաքաշինության նախարարություն (ՔՆ)
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ					
Շինհրապարակի նախապատրաստում աշխատանքների համար	Շինարարական տեխնիկայի/սարքավորումների համար առանձնացված տարածքի ապահովում, անհրաժեշտության դեպքում՝ շինհրապարակի ցանկապատում, լուսավորության ապահովում գիշերային ժամերին*	Կապալառու	ՏՎԸ, ՀՋԿ ՓԲԸ	Շինարարական աշխատանքների ընթացքում	ՀՀ ԱՆ ՏԻՄ ՀՀ ՔՆ



ՀԱՅՁՐՄՈՒՂԿՈՑՈՒՂԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

	Քայլերի պահեստավորում շինհրապարակի մեկուսացված տարածքներում *	Կապալա- ռու	ՏՎԸ, ՀՋԿ ՓԲԸ	Շինարարական աշխատանքների ընթացքում	ՀՀ ԲՆ ՏԲՄ ՀՀ ՔՆ
	Շինհրապարակի ցանկապատում, շինհրապարակ հասնելու համար ճանապարհների կառուցում *				
	Անվտանգության ցուցումներով պաստառների, ազդանշանների, տեղեկացնող, արգելող, նախազգուշացնող նշանների և ցուցանակների տեղադրում				
Շինարարական տեխնիկայի շահագործում	Շինհրապարակում շահագործվող կռունկների, մեքենաների, տեխնիկայի, սարքավորումների վերաբերյալ փորձագիտական դրական եզրակացության առկայություն *	Կապալա- ռու	ՏՎԸ, ՀՋԿ ՓԲԸ	Շինարարական աշխատանքների ընթացքում	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն



ՀԱՅՁՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

<p>Հողային աշխատանքների իրականացումներ կայուն գործածվող ասբեստե խողովակներ պարունակող տեղամասերում</p>	<p>Ասբեստե խողովակներով տեղամասերի ճշգրիտ կերպով սահմանագծում և առկա խողովակների հետ շփումից խուսափելու համար զգուշորեն փորում նշված տարածքի երկայնքով Փորելիս պատահաբար ասբեստե խողովակների հանդիպելու դեպքում՝ փորված տարածքի անհապաղ լցում և գրունտի խտացում, ինչպես նաև նախազգուշացնող նշանների տեղադրում</p>	<p>Կապալա- ռու</p>	<p>ՏՎԸ, ՀՋԿ ՓԲԸ</p>	<p>Հողափորման աշխատանքների ընթացքում</p>	<p>ՀՀ ԲՆ</p>
<p>Աշխատողների անվտանգություն և սանիտարահիգիենիկ պայմաններ</p>	<p>Աշխատողների համար առաջին օգնության դեղարկղերով և հակահրդեհային միջոցներով ապահովված ժամանակավոր կացարանների տեղադրում * Աշխատողների համար պատշաճ սանիտարահիգիենիկ պայմանների ապահովում* Հատուկ արտահագուստի և համազգեստերի տրամադրում* Պաշտպանիչ պատերի տեղադրում խրամուղիներում *</p>	<p>Կապալա- ռու</p>	<p>ՏՎԸ, ՀՋԿ ՓԲԸ</p>	<p>Շինարարական աշխատանքների ընթացքում</p>	<p>ՀՀ ԱՆ ՀՀ ՔՆ</p>
<p>ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ</p>					



ՀԱՅՁՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

<p>Քլորավորման գործընթացներից առաջացող անվտանգության սպառնալիքները</p>	<p>Քլորավորման կայանների շարունակական ստուգում օպերատորների վերապատրաստում Քլորի արտահոսքի դետեկտորների տեղադրում Պաշտպանության և վթարային իրավիճակներում արագ արձագանքման համար անհրաժեշտ սարքավորումների ապահովում օպերատորների համար</p>	<p>ՀՋԿԸ</p>	<p>ՋՏՊԿ</p>	<p>Շահագործման ընթացքում</p>	<p>ԲՆ ԱՆ</p>
<p>Ջրամաքրման արդյունքում տիղմից հողի և ջրի աղտոտում (գետի, ջրհորի, աղբյուրի կապտամ)</p>	<p>ՀՀ օրենսդրության համաձայն հաստատված թափոնների հեռացման համար նախատեսված տեղամասերի օգտագործում</p>	<p>ՀՋԿԸ</p>	<p>ՋՏՊԿ</p>	<p>Շահագործման ընթացքում</p>	<p>ԲՆ ԱՆ</p>
<p>Ջրի աղբյուրների աղտոտում ընտանի կենդանիների, խոշոր եղջերավոր կենդանիների, ոչխարների բուծման</p>	<p>Սանիտարական պահպանման գոտիների պատշաճ շահագործում և տեխնիկական սպասարկում</p>	<p>ՀՋԿԸ</p>	<p>ՋՏՊԿ</p>	<p>Շահագործման ընթացքում</p>	<p>ԲՆ ԱՆ</p>



ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

հետևանքով					
-----------	--	--	--	--	--

** Մանրամասն բացատրությունները տես ՀԶԿԸ-ի «Նախապատրաստական և շինարարական աշխատանքների ընթացքում առողջության և անվտանգության ապահովման գործողությունների ուղեցույցներ»-ում, որը ներառվելու է յուրաքանչյուր ենթաձրագրի շրջակա միջավայրի կառավարման ծրագրում (ՇՄԿԾ)*



3.10 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄԱՍԻՆ ԶԵԿՈՒՅՑՆԵՐԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

- Լիցենզավորված ՏԿԸ-ն պետք է իրականացնի ՀՇԾ-ի շրջանակներում կատարվող աշխատանքների մշտական բնապահպանական դիտանցում և յուրաքանչյուր ամսվա համար նախապատրաստի բնապահպանական վերահսկողության մասին զեկույցներ՝ ՇՄԿԴ-ների և համապատասխան: Չեկույցի ձևաչափը սահմանվում է կոնկրետ ենթաձրագրի վերաբերյալ ՇՄԿԴ-ները պատրաստ լինելուց անմիջապես հետո:
- ՀՋԿԸ-ի անձնակազմը կազմում է եռամսյակային զեկույցներ շինարարական աշխատանքների ընթացքում իրականացվող բնապահպանական ու անվտանգության միջոցառումների նկատմամբ վերահսկողության գործընթացի մասին: Չեկույցները ներկայացվում են ՀՋԿԸ-ի ղեկավարությանը կամ խորհուրդ, ՁՏՊԿ, ՀԲ և մյուս շահագրգիռ կողմերին եռամսյակի ավարտից հետո 3 շաբաթվա ընթացքում:



ԳԼՈՒԽ 4. ԳՆՈՒՄՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

4.1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գնումները ծրագրի իրականացման կարևոր բաղադրիչ են, և դրանց արդյունավետ ու ժամանակին չիրականացվելու դեպքում, ծրագիրը չի կարող լինել ամբողջությամբ շահավետ: Գնումների անբավարար իրականացման հետևանքով առաջ են գալիս ծրագրի ուշացումներ, ավելորդ ծախսեր, հայտատուների կողմից բողոքներ, ինչը բացասաբար է անդրադառնում հարակից կառույցների հեղինակության վրա: Գնումների միասնական ու արդյունավետ իրականացումը հնարավոր դարձնելու համար սույն գլխում առաջարկվում են ընդհանուր ուղեցույցներ այդ հարցերով հետաքրքրվողների համար: Ծրագրի շրջանակներում՝ ծրագրի իրականացման և պայմանագրերի կնքման ու կառավարման համար պատասխանատվություն է կրում ԾԻՄ-ը:

Մասնավորապես, ԾԻՄ-ը պատասխանատու է Ծրագրի շրջանակում գնումների բոլոր գործողությունները Համաշխարհային բանկի գնումների ուղեցույցներին համապատասխան իրականացնելու համար: Ավելի մանրամասն՝ Ծրագրի շրջանակներում գնումներն իրականացվում են Համաշխարհային բանկի ընթացակարգերին համապատասխան, ինչպես սահմանված է Համաշխարհային բանկի ուղեցույցներով՝

- «Ուղեցույցներ. ՎՋՄԲ փոխառությունների և ՄՁԱ վարկերի շրջանակներում Համաշխարհային բանկի վարկառուների կողմից ապրանքների, աշխատանքների և ոչ խորհրդատվական բնույթի ծառայությունների գնումներ» (2011 թվականի հունվար):
- «Ուղեցույցներ. ՎՋՄԲ փոխառությունների և ՄՁԱ վարկերի շրջանակներում Համաշխարհային բանկի վարկառուների կողմից խորհրդատուների ընտրություն և ներգրավում» (2011 թվականի հունվար):

ՀԲ-ի քաղաքականությամբ պահանջվում է, որ վարկառուները (ներառյալ Բանկի վարկերի շահառուները), ինչպես նաև հայտատուները, մատակարարները և կապալառուները, գնումների իրականացման և պայմանագրերի կատարման ընթացքում պահպանեն էթիկայի բարձրագույն նորմերը: Համաձայն ՀԲ-ի քաղաքականության՝ կարող են կիրառվել նաև 2006 թվականի



ՀԱՅՁՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

հոկտեմբերի 15-ով թվագրված և 2011 թվականի հունվարին վերանայված «ՎՋՄԲ փոխառությունների և ՄՁԱ վարկերի ու դրամաշնորհների միջոցով ֆինանսավորվող ծրագրերում խարդախության և կոռուպցիայի կանխարգելման և դրանց դեմ պայքարի մասին» Համաշխարհային բանկի ուղեցույցները:

4.2 ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ

Գնումների պլանը (ԳՊ) ծրագրի պլանավորման և բյուջեի իրականացման հիմնական փաստաթուղթն է: Յուրաքանչյուր փաթեթի հաշվարկված արժեքը, գնումների կամ ընտրության մեթոդը, գործընթացին նախորդող կամ հաջորդող վերանայման պահանջները և մրցույթին վերաբերող այլ մանրամասներ կներառվեն ԳՊ-ում, որը կազմվում է ԾԻՄ-ի կողմից և ամփոփվում է Բանկի հետ խորհրդակցությամբ:

ԾԻՄ-ը, Համաշխարհային բանկից ստացված աջակցությամբ, մշակել է ծրագրի իրականացմանն ուղղված գնումների նախնական պլան, որը հիմք է ընդունվում գնումների մեթոդների և ժամանակացույցի որոշման համար: ՀՋԿ-ի գլխավոր տնօրենի և Համաշխարհային բանկի համաձայնությամբ՝ ԳՊ-ը թարմացվում է առնվազն տարին մեկ անգամ կամ ավելի հաճախ, եթե պահանջվում է ծրագրի փաստացի իրականացումն արտացոլելու համար, և տեղադրվում է Բանկի ինտերնետային կայքում, ինչպես նաև լայն հասարակության համար հասանելի կայքում՝ առանց ծախսերի նախահաշվի:

4.3 ԳՆՈՒՄՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

ՀՋԾ-ի համար պահանջվող բոլոր ապրանքները, աշխատանքները և խորհրդատվական ծառայությունները, որոնք ֆինանսավորվում են փոխառության միջոցներից, պետք է գնվեն կիրառելի Գնումների ուղեցույցներով սահմանված կամ դրանցում նշված պահանջներին և սույն Բաժնի դրույթներին համապատասխան:

ԾԻՄ-ը նախապատրաստում է ապրանքների ու աշխատանքների գնման համար անհրաժեշտ մրցութային փաստաթղթերը և ՀՋԾ-ի շրջանակներում ներկայացնում է խորհրդատուների ընտրության պահանջ՝ օգտագործելով ՀՋԿ-ի այլ վարչությունների կողմից կազմված



ՀԱՅՁՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Տեխնիկական մասնագրերը և ՏՄ-ները և, ըստ անհրաժեշտության, ստանում է Բանկի հաստատումը: Կոնկրետ առաջարկի (ազգային կամ միջազգային) տեսակից կամ բնույթից կախված՝ մրցութային փաստաթղթերը կազմվում են անգլերեն կամ հայերեն:

ԾԻՄ-ը տեղական թերթում (որպես կանոն, այդպիսի հայտարարությունները հրապարակվում են «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում) և լայն հասարակության համար հասանելի ինտերնետային կայքում՝ www.procurement.am, հրապարակում է ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման համար անհրաժեշտ բոլոր հայտարարությունները/հրապարակումները:

Եթե, համաձայն ՀԲ համապատասխան ուղեցույցների դրույթների, պահանջվում է միջազգային հայտարարություն, ապա հայտարարությունները հրապարակվում են *UNDB* առցանց պարբերականում:

4.4. ԾԻՄ-Ի ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

Հայտերի կամ առաջարկերի գնահատումն իրականացվում է ԾԻՄ-ի գնահատող հանձնաժողովի (հանձնաժողովների) (ԳՀ) կողմից, որը ձևավորում է ՀԶԿԸ-ի գլխավոր տնօրենը: Հայտերի կամ առաջարկների գնահատում իրականացնելու նպատակով ԳՀ-ը կազմավորվում է ՀԶԿԸ-ի գլխավոր տնօրենի հատուկ հրամանով՝ նախքան գնումների գործողությունների մեկնարկը: Հատուկ պատվերներ կարող են տրվել գնման եզակի առարկայի կամ նույն բնույթի և նշանակության մի քանի առարկաների համար:

ԳՀ-ը բացում և գնահատում է հայտերը կամ առաջարկները:

Հանձնաժողովի կազմավորման մասին հրամանով նշանակվում է ԳՀ-ի նախագահ և քարտուղար: Քարտուղարը Հանձնաժողովի անդամ չէ:

Քարտուղարը՝

- 1) կազմակերպում է Հանձնաժողովի աշխատանքները,
- 2) ստանում և հաշվառում է հայտերը,
- 3) կազմում ու Կառավարման խորհրդի հաստատմանն է ներկայացնում փաստաթղթեր,
- 4) կազմում է համապատասխան փաստաթղթեր՝ գրառելով և ստուգելով Հանձնաժողովի գործունեության մասին տեղեկությունները,



ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

5) ապահովում է այդ փաստաթղթերի անվնաս պահպանումը Հանձնաժողովի գործունեության ընթացքում:

Գնման առարկայի բարդությունից կախված՝ ԳՀ անդամների թիվը կարող է տատանվել 3–7-ի միջև:

Գլխավոր տնօրենը կարող է պահանջել առաջարկված ԳՀ անդամի փոփոխություն, եթե՝ i) նախքան ԳՀ աշխատանքային հանդիպումները կամ դրանց ընթացքում պարզվում է, որ նշանակված անձը չունի գնման առարկայի մասին բավարար իմացություն, կամ ii) նշանակված անձն ունի շահերի բախում, կամ iii) անձն անտեսում է աշխատանքային հանդիպմանը ներկա գտնվելու հրավերը կամ ցանկացած այլ պատճառով չի կարողանում ներկայություն ապահովել երկու անգամ անընդմեջ, այնուամենայնիվ, պայմանով, որ այդ անձը ԳՀ աշխատանքային հանդիպման օրվանից առնվազն մեկ օր առաջ պատշաճ ձևով ծանուցվել է ԾԻՄ–ի կողմից, կամ iv) անձը հրաժարվում է ստորագրել Շահերի բախման բացակայության մասին հայտարարությունը (**տե՛ս թիվ 1 հավելվածը**): ԳՀ-ի յուրաքանչյուր անդամ գնահատում իրականացնելիս և որոշում կայացնելիս պետք է գործի անկախ:

350 միլիոն և ավելի արժողությամբ մրցույթների դեպքում ԾԻՄ–ը, նախքան պայմանագրի ստորագրումը, գնահատման արդյունքները ներկայացնում է ՀՀ Կառավարության հաստատմանը:

4.5. ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ

Մրցութային փաստաթղթերում և առաջարկի մասին հրավերում նշված վճարման պայմանը պետք է համաձայնեցվի ֆինանսական հարցերով կառավարչի հետ նախքան այդ փաստաթղթերը տրամադրելը: ԾԻՄ–ը պատասխանատու է պայմանագրերի համակարգման համար (աշխատանքային գործընթացի նկատմամբ ամենօրյա վերահսկողություն, կատարված աշխատանքների կամ արդյունքների հաստատում, պայմանագրի գործողության ժամկետի երկարաձգման համար դիմումների և (կամ) պատվերի փոփոխության մասին հայտերի



ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

կազմում): ԾԻՄ–ը պատասխանատու է ժամանակին վճարումների, ինչպես նաև պայմանագրի գործողության ժամկետի երկարաձգման հաստատման համար դիմումների և պատվեր փոփոխության մասին հայտերի ժամանակին ներկայացման համար՝ ՀԲ–ի ուղեցույցներին համապատասխան:

Պայմանագրի բարեհաջող կատարման և պատվիրատուի ու կատարողի միջև հարաբերությունների առումով՝ պայմանագրերի համակարգման կարևորությունը չպետք է թերագնահատվի:

Պայմանագրի հետ կապված փաստաթղթերում ինքնին պետք է ճշգրտորեն ներկայացված լինեն պայմանները և մանրագնին հսկողության պայմաններում դրանցում կատարված փոփոխությունները (ծառայությունների կապակցությամբ իրականացված փոփոխություններով ու ՀԲ ընթացակարգերով պայմանավորված): Տարբեր տեսակի փոփոխություններ թույլատրելու պատասխանատվություն հաճախ կրում են տարբեր մարդիկ, ինչը պետք է արտացոլվի հաստատված ներքին ընթացակարգերում:

Պայմանագրի համակարգման համար պատասխանատու է հետևյալ թիմը՝

1. Գլխավոր տնօրեն
2. ՆՕՀՎ–ի պետ
3. Ֆինանսների մասնագետ (մասնագետներ)
4. Հաշվապահ (հաշվապահներ)
5. Ծրագրի բաղադրիչների համակարգող (համակարգողներ)
6. Գնումների մասնագետ (մասնագետներ)
7. Շրջակա միջավայրի վրա և սոցիալական ազդեցության հարցերով մասնագետ (մասնագետներ)
8. Իրավաբան

Գնումների մասնագետը ստորագրված պայմանագրերի համաձայն պատասխանատու է պայմանագրի գործողության ժամկետի նկատմամբ հսկողություն իրականացնելու, իսկ մրցությային փաստաթղթերի համաձայն՝ ապահովման անհրաժեշտ միջոցների գոյության ու չափի համար:



ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Մասնավորապես, հայտի և կատարողականի ապահովման միջոցները վերանայվում են Գնումների մասնագետի, իսկ նախավճարի ապահովման վերանայումն իրականացվում է գնումների և ֆինանսների մասնագետների կողմից:

Մաքսագերծումն իրականացվում է ՀԶԿԸ-ի մաքսային գործակալի կողմից՝ ՀԶԿԸ-ի համապատասխան վարչությունների կողմից ստուգված փաստաթղթերի հիման վրա:

Ապրանքների և խորհրդատվական ծառայությունների մասին պայմանագրերում փոփոխությունները նախապատրաստվում են ծրագրի բաղադրիչների կամ պայմանագրի հարցերով համակարգողների կողմից՝ Գնումների մասնագետի հետ համագործակցությամբ: Աշխատանքների կատարման մասին պայմանագրերում կատարվող փոփոխությունների կապակցությամբ պատասխանատվություն է կրում ինժեներատեխնիկական ստորաբաժանումը: Աշխատանքների, ապրանքների և ծառայությունների ընդունման ընթացակարգն իրականացվում է Գլխավոր տնօրենի հրամանով կազմավորված ընդունող հանձնաժողովի կողմից:

ԾԻՄ-ը պատասխանատու է ՀԶԾ-ի շրջանակում իրականացվող գնումներին առնչվող ցանկացած հարցին վերաբերող ամբողջ տեղեկատվությունը ՀԲ հաղորդելու և զեկուցելու գործընթացը կազմակերպելու համար:



ԳԼՈՒԽ 5. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

5.1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ծրագրի ֆինանսական խնդիրների համակարգման հարցում համապատասխանության և որակի ապահովումը հնարավոր դարձնելու համար սույն գլխում ներկայացվում են ԾԻՄ-ի ֆինանսական կառավարմանը վերաբերող գործառնական ընթացակարգեր: Դրանք ներառում են ինստիտուցիոնալ միջոցառումներ, դրամական հոսքերի կառավարման մեխանիզմ, բյուջետավորում, հաշվապահական հաշվառում, աուդիտ և հաշվետվությունների ներկայացում: Ներկայացված տեղեկատվությունը ոչ մի դեպքում չի կարող լինել սպառիչ: Սույն փաստաթղթում չարձարձված հարցերը կոնկրետ դեպքերում կարող են քննարկվել ԾԻՄ-ի կողմից, քանի որ և երբ դրանք երևան են գալիս ծրագրի իրականացման ընթացքում:

5.2 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԸ

ԾԻՄ-ի ֆինանսահաշվապահական կառավարման գրասենյակը (ՖՀԿԳ) պետք է ստեղծի դրամական միջոցների վճարման, հաշվապահական հաշվառման, ծախսերի կառավարման, զեկույցների ներկայացման արդյունավետ մեխանիզմ, որը հնարավորություն կտա ԾԻՄ-ին կատարելու ՀՋՋԾ ԼՖ2-ի արդյունավետ ֆինանսական կառավարումն ապահովելու հետ կապված իր լիազորությունները:


ՖՀԿՖ-ն պատասխանատու է փաստաթղթերի վերանայման և մշակման համար, ինչը ապահովում է ԾԻՄ-ի բնականոն աշխատանքների համար անհրաժեշտ ակտիվների, ծառայությունների և սարքավորումների պատշաճ կերպով ձեռքբերումը՝ ՀՋԿԸ-ի ներքին կանոնների ու կանոնակարգերի համաձայն:

5.3 ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԸ

Ծրագրի հետ կապված դրամական միջոցները պահվում են Պետական գանձապետարանում: Այդ նպատակով ՀՋԿԸ-ն ծրագրի համար բացում է հատուկ հաշիվ Պետական գանձապետարանում և ղեկավարում է ծրագրի դրամական միջոցները Գանձապետարան-Հաճախորդ համակարգի միջոցով:

Պետական համաֆինանսավորման միջոցների համար Պետական գանձապետարանում բացվում և սպասարկվում է մեկ այլ հաշիվ:

Ծրագրի եկամուտները վճարվում են բանկային ընթացակարգերին, իրավական պայմանագրերին, վճարումների մասին ուղեցույցներին և վճարման ընթացակարգերի մասին նամակին համապատասխան: Դրամական հոսքերի մասին մանրամասն տեղեկությունները ներկայացված են Պատկեր 2-ում:



5.4 ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՈՒՄԸ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ ԵՎ ԱՌԻԴԻՏԸ

5.4.1 Բյուջետավորումը

ՀԶԶԾ ԼՖ2 ծրագրի պլանները և բյուջեները պետք է մշակվեն ՀԶԿԸ-կողմից՝ ՀԿ-ի (SAUR S.A.S., Ֆրանսիա) ղեկավարությամբ և ՋՏՊԿ-ի հետ համագործակցությամբ, ինչպես նաև արժեքավոր ներդրում ստանալով ՀԲ խորհրդատուներից: Վերջնական պլանները և բյուջեները ներկայացվում են ԾԿԽ-ի հաստատմանը:

ՀԶԿԸ-ի ԾԻՄ-ը պատասխանատու է Ծրագրի տարեկան բյուջեն կազմելու համար: Տարեկան բյուջեն կազմելիս հիմք է ընդունվում է գնումների պլանը, որը պարբերաբար թարմացվում է



գնումների մասնագետի կողմից: ՀՋՁԾ ԼՖՁ-ի ընթացիկ բյուջեն (ներառյալ ԾԻՄ-ի անձնակազմի անդամների ցուցակը), որը կազմում է ֆինանսների կամ վճարումների հարցերով մասնագետը, վերանայվում է ծրագրի ղեկավարի կողմից և համաձայնեցվում է ՀՋԿԸ-ի տնօրենների, ՖՆ-ի հետ, ինչպես նաև հաստատվում է ԾԿԽ-ի կողմից:

Անհրաժեշտ բոլոր փոփոխությունները վերանայվում են ՀՋԿԸ-ի ներդրումային ծրագրերի համակարգման վարչության տնօրենի կողմից և հաստատվում են ՀՋԿԸ-ի գլխավոր տնօրենի և ՀԲ-ի կողմից:

Բյուջեն ներկայացվում է հողվածներով, բաղադրիչներով և ֆինանսական աղբյուրներով՝ ՀԲ ծրագրերի պահանջներին համապատասխան:

Նախքան Ծրագրի բյուջեում որևէ փոփոխություն կատարելը ՀՋԿԸ-ն համաձայնեցնում է դրանք ՀԲ-ի, անհրաժեշտության դեպքում նաև՝ ՖՆ-ի և ՋՏՊԿ-ի հետ, որից հետո փոփոխություններ է կատարում տարեկան բյուջեում:

5.4.2 Ֆինանսական հաշվետվություններ ներկայացնելը

ԾԻՄ-ը յուրաքանչյուր կիսամյակ կազմում է ՄՖՁ-ների ամբողջական շարք՝ Ծրագրի գործողության ամբողջ ժամանակահատվածի համար: ՄՖՁ-ների ձևաչափի մաս են կազմում՝ i) ծրագրի աղբյուրները և դրամական միջոցների օգտագործումը. ii) դրամական միջոցների օգտագործումն ըստ ծրագրով նախատեսված աշխատանքների. iii) հատուկ հաշիվներից քաղվածքները iv) հաշվապահական հաշվեկշիռը և v) ԾՏ մասհանման ցուցակը: Այդ ֆինանսական հաշվետվությունները ներկայացվում են ՀԲ յուրաքանչյուր օրացուցային կիսամյակի ավարտից հետո 45 օրվա ընթացքում՝ ներառելով այդ կիսամյակի վերաբերյալ տվյալներ Բանկի համար ընդունելի ձևերով և բովանդակությամբ: Կիսամյակային առաջին ՄՖՁ-ները ներկայացվում են նախնական վճարմանը հաջորդող առաջին կիսամյակի ավարտից հետո: ԾԻՄ-ը նաև ամսական և եռամսյակային հաշվետվություններ է ներկայացնում ՀՀ Կառավարություն՝ ըստ ֆինանսական միջոցների աղբյուրների, որոնցում ներառվում են ծրագրի ֆինանսավորումը և ծախսումները ըստ կատեգորիաների՝ նշելով իրական ծախսերի և բյուջետավորված և ծրագրված հատկացումների միջև տարբերությունները:

5.4.3 Հաշվապահական հաշվառումը և ֆինանսների ներքին հսկողությունը

Հաշվապահական հաշվառման պարբերաշրջանի փուլում անցկացվում են մի շարք ստուգումներ՝ աշխատանքների թափանցիկությունը և արդյունավետությունն ապահովելու համար: Այդ ընթացակարգերը և ստուգումները, ըստ էության, ընդհանուր մեխանիզմներ են, որոնք պետք է կիրառվեն Ծրագրի իրականացման ընթացքում: Եթե ծրագրի իրականացման ընթացքում հաշվապահական գործառնություններում հսկման այլ մեխանիզմներ կամ քայլեր մշակվելու անհրաժեշտություն է առաջանում, ապա դրանք պետք է իրականացվեն:

- (i) Ֆինանսների մասնագետն վերանայում է նախնական փաստաթուղթը փաստաթղթերի ընդունման համար սահմանված պայմանների հետ դրա



- համապատասխանությունը ստուգելու համար, այնուհետև ուղարկում է հաշվապահական հաշվառման համակարգում գրանցման:
- (ii) Հաշվապահը ֆինանսների մասնագետից ստանում է փաստաթղթերը և վերանայում: Նա որոշում է՝ արդյոք փաստաթղթերի համար անհրաժեշտ է նախնական հաստատում թե ոչ, որից հետո հաշվապահը տեղեկությունները ներմուծում է հաշվապահական համակարգ և կազմում է ծախսումները հիմնավորող փաստաթուղթ:
 - (iii) Նախքան վճարման ծանուցագիրը տպելը, հաշվապահը հաշվապահական հաշվառման փաստաթղթում գրանցված վճարման ծանուցագրի համարը համեմատում է տպվող վճարման ծանուցագրի համարի հետ: Հաշվապահը տպում է վճարման ծանուցագիրը ծախսումները հաստատող փաստաթղթի հետ: Բացի դրանից, նա գրանցում է վճարման ծանուցագրի համարը առանձին գրանցամատյանում՝ որպես հսկողության լրացուցիչ միջոց:
 - (iv) Գործընթացի մասին համալիր փաստաթղթերն ուղարկվում են ֆինանսների մասնագետին: Նրա կողմից վերանայվում են նաև նախնական փաստաթուղթը, ծախսումները հաստատող փաստաթղթերը և վճարման ծանուցագիրը: Ֆինանսների մասնագետը վերանայում է փաստաթղթերը:
 - (v) Ծրագրի ղեկավարը վերանայում է բոլոր փաստաթղթերը և հաստատում գործընթացը՝ ստորագրելով ծախսումները հաստատող փաստաթուղթը և վճարման ծանուցագիրը ներկայացնելով Գլխավոր տնօրենին, որպեսզի վերջինս ստորագրի այդ փաստաթղթերը:
 - (vi) Երբ Գլխավոր տնօրենը ստորագրում է փաստաթղթերը, Ծրագրի ղեկավարն ուղարկում է դրանք ֆինանսների մասնագետին: Ֆինանսների մասնագետը վերանայում է փաստաթղթերը՝ համոզվելու համար, որ ստորագրությունները և փաստաթղթերը տեղում են:
 - (vii) Միայլ հայտնաբերելու դեպքում ֆինանսների մասնագետն ուղարկում է փաստաթղթերը անհապաղ ուղղման: Հաշվապահը վերանայում է փաստաթղթերը, և եթե դրանք ամբողջական են, նա պետք է սահմանված կարգով ներկայացնի փաստաթղթերը:

5.5 ԱՌԻԴԻՏԸ

Ծրագրի աուդիտն իրականացվում է i) Բանկի համար ընդունելի և ՀՋԿԸ-ի կողմից վարձվող անկախ մասնավոր աուդիտորների կողմից՝ Բանկի համար ընդունելի տեխնիկական առաջադրանքի (SU) պայմաններով և ii) Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան, որոնք սահմանվում են Հաշվապահների միջազգային ֆեդերացիայի (ՀՄՖ) **Աուդիտի և հավաստիության միջազգային ստանդարտների խորհրդի** կողմից:

Ամենամյա աուդիտի ենթարկված ծրագիրը և կազմակերպության ֆինանսական հաշվետվությունները տրամադրվում են Բանկին յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտից հետո վեց ամսվա ընթացքում: Ծրագրի կապակցությամբ՝ նույն փաստաթղթերը ներկայացվում են ծրագրի ավարտից հետո: Վարկառուն համաձայնվել է, որ ծրագրի և կազմակերպության համար աուդիտի հաշվետվությունները հրապարակվեն (տեղադրելով



դրանք www.armwater.am կայքում կամ հրապարակելով որևէ ազգային թերթում) աուդիտորներից հաշվետվություններ ստանալուց հետո երկու շաբաթվա ընթացքում:

5.6 ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ

5.6.1 Մասհանման հայտը

ՀԲ ներկայացվող մասհանման հայտերը համարվում են վավերական, եթե ՀՀ Կառավարության անունից ստորագրված են Գլխավոր գանձապահի և ՋՏՊԿ-ի նախագահի կողմից, իսկ ՀՋԿԸ-ի անունից ստորագրված են՝

1. միայն ՀՋԿԸ-ի Գլխավոր տնօրենի կողմից,
կամ միաժամանակ՝
2. առաջին ստորագրություն՝ ՀՋԿԸ-ի Ներդրումային ծրագրերի վարչության տնօրենի երկրորդ ստորագրություն՝ ՀՋԿԸ-ի վարչական հարցերով տնօրենի կողմից:

5.6.2 Վճարման պահանջագիրը

Վճարման պահանջագրում նշվում են ենթածրագրի վերաբերյալ հիմնական տեղեկություններ, ինչպիսիք են՝ ենթածրագրի անվանումը, նախատեսված ֆինանսավորման աղբյուրը, վճարումների կատեգորիան, վճարման ենթակա գումարը, վճարումների թիվը և պահանջագիրը ներկայացնելու պահին ենթածրագրի համար վճարված կանխավճարը:

Վճարման մասին հուշագրում ներառվում են առնվազն հետևյալ տեղեկությունները՝ ենթածրագրի անվանումը, գումարը, վճարման կատեգորիան, վճարման համարը և վճարման հանձնարարականը: Հուշագիրը ստորագրում են նաև ենթածրագրի համար պատասխանատու անձը և ստորաբաժանման ղեկավարը:

Եթե կապալառուն վերադարձնում է նախկինում թույլատրված որևէ վճարում, համապատասխան ստորաբաժանումը կազմում է հուշագիր, որին կցում է վճարումը հաստատող փաստաթուղթը և ենթածրագրի վերաբերյալ բոլոր տեղեկությունները:

Պատվերի փոփոխության դեպքում, հուշագրին կցվում է փոփոխված պատվերի մանրամասն նկարագիրը՝ հաստատված գործադիր կոմիտեի կողմից: Պատվերի փոփոխության մասին դիմումը պետք է լինի վճարման պահանջագրի տեսքով:

Պատշաճ կերպով ստորագրված և ամբողջական տեսքով այս բոլոր փաստաթղթերը համարվում են ենթածրագրերի ֆինանսավորման նպատակով վճարումների կատարման համար միակ վավեր փաստաթղթերը: Գրանցման հարցերով զբաղվում է ֆինանսների կամ վճարման հարցերով մասնագետը: Եթե վճարման պահանջագիրը ներկայացվում է նոր ենթածրագրի համար, Հաշվապահը բացում է համապատասխան հաշիվ՝ ծախսումների մասին



ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Վիստաթուղթը կազմելու համար: Եթե վճարման պահանջագիրը ներկայացվում է գործող ենթածրագրի մասով, Հաշվապահը կատարում է համապատասխան մուտքագրումներ:

- *«Ֆինանսական ձեռնարկում» տրվում են մանրամասն տեղեկություններ:*



ԳԼՈՒԽ 6. ԴԻՏԱՆՑՈՒՄ, ԳՆԱՀԱՏՈՒՄ, ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ, ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

6.1 ԴԻՏԱՆՑՈՒՄԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Ծրագրի դիտանցումն ու գնահատումն (ԴԳ) իրականացվում է երկու նպատակով: Առաջին նպատակը ծրագրի իրականացման ԴԳ–ն է, իսկ երկրորդը՝ ծրագրի արդյունքների ԴԳ–ն: Երկու դեպքում էլ ԴԳ–ն իրականացվում է՝ օգտվելով ծրագրի կատարողականի ցուցանիշներից: ԴԳ–ն ուսումնասիրում է ծրագրի ֆիզիկական, տնտեսական, սոցիալական և շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցությունները:

6.2 ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ

Կատարողականի ցուցանիշները ծրագրերի համար նախատեսված ծախսերի, ընթացակարգերի, «արտադրանքի», արդյունքների և դրանց ունեցած ազդեցության ցուցանիշներն են: Դրանց հիմքում ընկած են փաստացի տվյալների հավաքումը՝ ներառյալ հնարավոր պաշտոնական հետազոտությունները, ինչպես նաև վերլուծությունները և հաշվետվողականությունը՝ արդյունքները ցույց տալու և ծառայությունների մատուցման բարելավման նպատակով ուղղիչ միջոցներ ձեռնարկելու համար: Ցուցանիշների որոշման հարցում կարևոր է հիմնական շահագրգիռ կողմերի ներգրավվածությունը, քանի որ այդ դեպքում հավանական է, որ նրանք հասկանան և կիրառեն ցուցանիշները կառավարման մասով որոշումներ կայացնելիս:

1-4 աղյուսակում ցուցադրված են Մասիս, Էջմիածին և Աշտարակ քաղաքների տարեկան բազային և նպատակային ցուցանիշները, որոնք առաջարկվում են «Համայնքային ջրամատակարարման ծրագիր» ծրագրի համար: Ծրագրի իրականացման ժամանակ ցուցանիշները պետք է խստորեն վերահսկվեն:



ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Աղյուսակ 1-4

		Ներդրումներ, մլն ԱՄՆ դոլար					Օրական ջրամատակարարում (ժամեր/օր)			
		ԴՈՆՈՐՆԵՐ	2012	2013	2014	Ընդամեն նք	Բազային տարի 2010	Նպատա- կային տարի 2012	Նպատա- կային տարի 2013	Նպատա- կային տարի 2014
1	Քաղաք Էջմիածին	ՀԲ		1.00	1.80	2.80	11.90	12.30	12.80	16.00
2	Քաղաք Մասիս	ՀԲ	0.80	2.00		2.80	16.94	17.34	17.84	21.04
3	Քաղաք Աշտարակ	ՀԲ		1.00	1.80	2.80	8.18	9.78	10.78	12.78

		Ներդրումներ, մլն ԱՄՆ դոլար					Կորուստները (%)			
		ԴՈՆՈՐՆԵՐ	2012	2013	2014	Ընդամեն նք	Բազային տարի 2010	Նպատա- կային տարի 2012	Նպատա- կային տարի 2013	Նպատա- կային տարի 2014
1	Քաղաք Էջմիածին	ՀԲ		1.00	1.80	2.80	82.6%	82.6%	75.0%	70.0%
2	Քաղաք Մասիս	ՀԲ	0.80	2.00		2.80	83.6%	83.0%	75.0%	70.0%
3	Քաղաք Աշտարակ	ՀԲ		1.00	1.80	2.80	84.3%	83.0%	75.0%	70.0%



ՀԱՅՋՐՄՈՒԴԿՈՅՈՒՂԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

		Ներդրումներ, մլն ԱՄՆ դոլար					Հաշիվների վճարում (հազար ՀՀ դրամ)			
		ՆՎԻՐԱ-ՏՈՒՆԵՐ	2012	2013	2014	Ընդամենը	Բազային տարի 2010	Նպատակային տարի 2012	Նպատակային տարի 2013	Նպատակային տարի 2014
1	Քաղաք Էջմիածին	ՀԲ		1.00	1.80	2.80	222,106	244,317	252,868	261,719
2	Քաղաք Մասիս	ՀԲ	0.80	2.00		2.80	107,361	118,098	122,231	126,509
3	Քաղաք Աշտարակ	ՀԲ		1.00	1.80	2.80	94,868	104,355	108,007	111,788



6.3 ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԴԻՏԱՆՑՈՒՄՆ ՈՒ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ծրագրի իրականացման ժամանակ Պայմանագրի կառավարման և դիտանցման միավորը (ՊԿԴՄ) դիտանցում և գնահատում է առաջընթացը և արդյունքները՝ համեմատելով դրանք աշխատանքային պլանի և արդյունքների շրջանակի հետ: Ծրագրի իրականացման մարմինը (ԾԻՄ) ծրագրի իրականացման վերաբերյալ եռամսյակային ընթացիկ հաշվետվություն է ուղարկում Պայմանագրի կառավարման և դիտանցման միավորին (ՊԿԴՄ)՝ եռամսյակի ավարտից ոչ ուշ, քան 45 օր հետո: Վերջինս այն փոխանցում է ՋՏՊԿ-ին, ՀԲ-ին և այլ շահագրգիռ կողմերին:

Ծրագրի իրականացման մարմինը (ԾԻՄ) պատրաստում է ամբողջական եռամսյակային հաշվետվություններ, որոնցում ներկայացվում է աշխատանքների իրականացման առաջընթացը ծրագրով նախատեսված բոլոր քաղաքներում, ինչպես նաև ծրագրի շրջանակներում ստացված «արտադրանքը» և արդյունքները՝ ընդգծելով հաջողությունները, սահմանափակումները և այն, թե արդյոք հաջողվել է հասնել դրված նպատակներին: Ծրագրի այս հաշվետվությունները ուղարկվում են Համաշխարհային բանկ հաշվետու եռամսյակի ավարտից ոչ ուշ, քան 45 օր հետո:

Հաշվետվության հատուկ նպատակն է իրականացնել պլանավորված գործողությունների կատարման և «արտադրանքի» ստացման համար նախատեսված ժամկետների ու ծախսումների դիտանցում, ինչպես նաև ներկայացնել բացառությունները, այդ թվում՝

- ժամանակին սկսված և ավարտված պլանավորված գործողությունների համամասնությունը,
- ձեռնարկված գործողությունների համար իրականացվող պլանավորված ծախսումների համամասնությունը,
- ուշացումով սկսված կամ ավարտված գործողությունների մանրամասները,
- այն հատուկ հիմնախնդիրները, որոնք ծագել են կամ նախատեսվում են, ինչպես նաև վնասը վերացնելու համար առաջարկվող միջոցառումները,
- հաջորդ եռամսյակի համար նախատեսվող հիմնական միջոցառումները:

Նմանատիպ հաշվետվությունները պետք է հասանելի լինեն հանրության համար ՀԶԿ-ի ինտերնետային կայքում, և ստացված արձագանքները նույնպես պետք է հրապարակվեն:

*Շրջակա միջավայրի մասին հաշվետվության ներկայացման մանրամասները նշված են 3-րդ ԳԼԽՈՒՄ:



ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 1

ԱՆԿՈՂՄՆԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ¹

Ծրագիր՝
Վարկի համարը՝
Ձևակերպումը
Ես՝ ներքոստորոգյալ
առաջադրվել եմ «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից

հանդես գալու որպես Գնահատման կոմիտեի անդամ, որը ստեղծվել է գնահատելու....., որը ներկայացվել է..... Ծրագիր-.....

Ես՝ ներքոստորոգյալս, սույնով հայտարարում եմ, որ համաձայն եմ մասնակցելու վերոնշյալ.....գնահատմանը: Սույն հայտարարագրով ես հաստատում եմ, որ ծանոթացել եմ մինչև օրս առաջարկներ/կամ մրցութային առաջարկներ ներկայացնելու սույն հայտին առնչվող հասանելի բոլոր տեղեկություններին: Ես նաև հայտարարում եմ, որ կատարելու եմ իմ պարտականությունները արդար և ազնիվ կերպով: Ես անկախ եմ² բոլոր այն կողմերից, որոնք շահ ունեն գնահատման գործընթացի արդյունքներից:³ Հավաստիացնում եմ, որ անցյալում չեն եղել, ներկայում չկան և, որքանով տեղյակ եմ, մոտ ապագայում չեն լինի փաստեր կամ հանգամանքներ, որոնք կարող են կասկածի տակ դնել իմ անկախությունը ցանկացած կողմի համար. այնուամենայնիվ, եթե գնահատման գործընթացի ընթացքում հայտնի դառնա, որ նմանատիպ կապ առկա է կամ առաջացել է, ապա ես անմիջապես կդադարեցնեմ գնահատման գործընթացին իմ մասնակցությունը:

Ես համաձայն եմ գաղտնի պահել ցանկացած տեղեկություն կամ փաստաթուղթ («գաղտնի տեղեկություններ»), որի մասին ինձ հայտնել են, կամ որը բացահայտվել կամ պատրաստվել է իմ կողմից գնահատման ընթացքում կամ արդյունքում և համաձայն եմ, որ այն օգտագործվի միայն գնահատման նպատակներով և չբացահայտվի այլ երրորդ անձանց: Ես նաև խոստանում եմ չպահել որևէ գրավոր տեղեկության կամ տրամադրված նախատիպի պատճենը: Գաղտնի տեղեկությունները չպետք է բացահայտվեն Գնահատման կոմիտեում չընդգրկված որևէ այլ անձի:

ԱՆՈՒՆԸ	
ՄՏՈՐԱԳՐՎԱԾ Է	
ԱՄՍԱԹԻՎԸ	

¹ Պետք է լրացվի գնահատման գործընթացում ընդգրկված բոլոր անձանց կողմից (այդ թվում՝ Գնահատման կոմիտեի քվեարկող և չքվեարկող անդամների և ցանկացած դիտորդի կողմից):

² Հաշվի է առնվում այն փաստը, թե արդյոք անցյալում եղել է կամ ներկայում առկա է ուղղակի կամ անուղղակի, ֆինանսական, մասնագիտական կամ ցանկացած այլ տեսակի կապ:

³ Սյսինքն՝ բոլոր ընկերությունները, որոնք մասնակցում են առաջարկ ներկայացնելու հրավերին կամ տենդերին, ներառյալ՝ մասնավոր անձինք կամ կոնսորցիումների անդամ հանդիսացող ձեռնարկությունները կամ ֆիրմաները, կամ նրանց կողմից առաջարկված ցանկացած գործընկեր կամ ենթակապալառու: